



Ձեռնարկ խորհրդարանականների համար

Մեռական շահագործումից և
սեռական բնույթի բռնություններից
երեխաների պաշտպանության մասին
Եվրոպայի խորհրդի կոնվենցիա
(Լանգարոտի կոնվենցիա)



Ձեռնարկ

խորհրդարանականների համար

Սեռական շահագործումից
և սեռական չարաշահումից
երեխաներին պաշտպանելու մասին
Եվրոպայի խորհրդի կոնվենցիա
(Լանցարոտեի կոնվենցիա)

Փաստաթուղթը պատրաստել է տկն. Սվերինա Սպասովան, փորձագետ խորհրդական, Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի Մոցիալական, առողջապահական և կայուն զարգացման հարցերով հանձնաժողովի քարտուղարության հետ համագործակցությամբ:

Կազմի ձևավորում՝ Ջեմմա Ագուասքա – © Եվրոպայի խորհուրդ

Տպագրված է 2011թ. հունվարին

Վերատպագրված է 2011թ. սեպտեմբերին, 2011թ. դեկտեմբերին

Թարմացված և վերատպագրված է 2012թ. դեկտեմբերին, 2013թ.

դեկտեմբերին

Մոցիալական, առողջապահական և կայուն զարգացման հարցերով հանձնաժողովի քարտուղարություն

Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողով F-67075 Strasbourg Cedex

Հեռ.՝ +33 (0)3 90 21 47 78

Ֆաքս՝ +33 (0)3 90 21 56 49

<http://assembly.coe.int>

Բովանդակություն

1. Եվրոպայի խորհուրդը և Խորհրդարանական վեհաժողովը.....	5
2. Խորհրդարանական վեհաժողովի նախագահի նախաբանը	7
3. Ընդհանուր ակնարկ.....	11
Ներածությունը և ձեռնարկի նպատակները	11
Նախապատմություն.....	13
Ոլորտի հիմնական միջազգային ստանդարտները	17
Եվրոպայի խորհրդի գործունեությունն այս ոլորտում.....	20
Ազգային խորհրդարաններին և Խորհրդարանական վեհաժողովին երեխաների նկատմամբ սեռական բռնության դեմ պայքարի ջանքերին մասնակից դարձնելը	22
4. Սեռական շահագործումից և սեռական չարաշահումից երեխաներին պաշտպանելու մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիա (Լանցարոտեի կոնվենցիա) (CETS թիվ 201)	27
Կոնվենցիայի նպատակը	28
Խտրականության բացառման սկզբունքը	28
Սահմանումներ.....	28
Կանխարգելիչ միջոցները	30
Կանխարգելման մասնագիտացված իրավասու մարմինները և համակարգող մարմինները	35

Պաշտպանական միջոցները և տուժողներին աջակցելը.....	36
Միջամտության միջոցառումները.....	39
Փաստերի քրեականացումը	42
Վարույթ հարուցելու և հանցագործության համար պատժելու ընդդատական պահանջները	50
Համապարտ պատասխանատվությունը	52
Պատժամիջոցները և ծանրացնող հանգամանքները	52
Նախկինում դատապարտված լինելը.....	53
Ընթացակարգերը.....	54
Սեռական բնույթի հանցագործությունների համար դատապարտված անձանց վերաբերյալ ազգային տվյալների գրանցումը և պահումը	58
Միջազգային համագործակցությունը	59
Դիտանցման մեխանիզմ՝ Կողմերի կոմիտեն.....	60
Այլ միջազգային փաստաթղթերին առնչությունը.....	61
Փոփոխություններ Կոնվենցիայում.....	62
Եզրափակիչ դրույթներ.....	63
5. Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարի տեղակալի վերջաբանը	65
Սեռական շահագործումից և սեռական չարաշահումից երեխաներին պաշտպանելու մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիա CETS No. 201.....	69
Նշումներ.	72

1. Եվրոպայի խորհուրդը և Խորհրդարանական վեհաժողովը

Եվրոպայի խորհուրդը մայրցամաքի ամենահին քաղաքական կազմակերպությունն է: 1949 թվականին հիմնված այս կազմակերպությունն ունի ավելի քան 800 միլիոն եվրոպացի ներկայացնող 47 անդամ պետություն և հինգ դիտորդ պետություն (Կանադա, Վատիկան, Ճապոնիա, Մեքսիկա և Ամերիկայի Միացյալ Նահանգներ):

Կազմակերպության հիմնական նպատակներն են՝

- ▶ պաշտպանել մարդու իրավունքները, խորհրդարանական ժողովրդավարությունը և օրենքի գերակայությունը բոլոր անդամ պետություններում,
- ▶ ամբողջ մայրցամաքի մակարդակով համաձայնագրեր մշակել անդամ պետությունների սոցիալական և իրավական գործելակերպերը ներդաշնակեցնելու նպատակով,
- ▶ խթանել եվրոպական ինքնության և տարբեր մշակույթներում փոխհատվող ընդհանուր արժեքների վրա հիմնված ընդլայնված միասնության շուրջ իրագեկությունը:

1990 թվականից ի վեր Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի 22 երկրների միացումը Եվրոպայի խորհրդին հաղորդել է իրական համաեվրոպական ուղղվածություն: Այդ ժամանակից ի վեր դրա հիմնական աշխատանքն է եղել ընդլայնված Եվրոպայի բոլոր ժողովրդավարությունների համար որպես քաղաքական խարիսխ և մարդու իրավունքները վերահսկող կազմակերպություն գործելը, քաղաքական, իրավական և սահմանադրական բարեփոխումներ իրականացնելու և համախմբելու հարցում նրանց օգնելը և լավագույն գործելակերպի փոխանակմանը խթանելը այնպիսի

ուղորտներում, ինչպիսիք են՝ մարդու իրավունքները, տեղական ժողովրդավարությունը, կրթությունը, մշակույթը և շրջակա միջավայրը:

Եվրոպայի խորհրդի գլխավոր գրասենյակը գտնվում է Ստրասբուրգում, Ֆրանսիա: Ըստ կանոնադրության այն ունի երկու բաղկացուցիչ մարմին՝ Նախարարների կոմիտե, որը կազմված է անդամ պետությունների արտաքին գործոց նախարարներից, և Խորհրդարանական վեհաժողով (ԵԽՄՎ), որի կազմում են 47 ազգային խորհրդարանների պատվիրակությունները:

Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի (<http://assembly.coe.int>) կազմում գործող 636 տղամարդ և կին, հավաքվում են տարեկան չորս անգամ՝ քննարկելու թեմատիկ հարցեր և ընդհանուր մարտահրավերներ, խնդրելու Եվրոպայի կառավարություններին գործողություններ ձեռնարկել և նրանց հաշվետու դարձնելու այդ գործողությունների համար: Նրանք խոսում են 800 միլիոն եվրոպացիների անունից, ում իրենք ներկայացնում են, ցանկացած թեմայի շուրջ իրենց ընտրությամբ, իսկ Եվրոպայի կառավարությունները, որոնք ներկայացված են Եվրոպայի խորհրդում Նախարարների կոմիտեի կազմում, պարտավոր են պատասխանել նրանց: Նրանք ընդլայնված Եվրոպայի ժողովրդավարական գիտակցությունն են:

2. Խորհրդարանական վեհաժողովի նախագահի նախաբանը

Երեխաներին և սեռական չարաշահումից նրանց պաշտպանելու գործը վայելում է խորհրդարանականների լիասիրտ և հզոր աջակցությունը: Այս նպատակով մեր վեհաժողովը չորս տարի դեկավարել է Եվրոպայի խորհրդի ՀԻՆԳԻՑ ՄԵԿԸ քարոզարշավի խորհրդարանային թևը: Վերջերս Նախարարների կոմիտեն համաձայնել է Վեհաժողովի առաջարկին՝ շարունակել քարոզարշավը ևս մեկ տարի՝ մինչև 2015 թվականի վերջը:

Միավորված ազգերի կազմակերպությունը և Եվրոպայի խորհուրդը համատեղ աշխատում են երեխաների իրավունքներն ու արժանապատվությունը պաշտպանելու ուղղությամբ: Նրանց առանցքային փաստաթղթերը՝ Երեխայի իրավունքների մասին Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիան ու Սեռական շահագործումից և սեռական չարաշահումից երեխաներին պաշտպանելու մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիան (Լանցարոտեի կոնվենցիա, CETS թիվ 201), ձգտում են վերացնել բռնությունը երեխաների հանդեպ: Միասին՝ նք կարող ենք հասնել այդ նպատակին՝ ազատել երեխաներին վախից ու չարաշահումից:

Հաշվարկված է, որ ամբողջ Եվրոպայում հինգ երեխայից մեկն իր կյանքում առնվազն մեկ անգամ սեռական չարաշահման զոհ է դառնում: Մեծ մասամբ չարաշահողներն օտար մարդիկ չեն, երեխաների դեմ ոտնձգություն են կատարում նրանց ծանոթ մարդիկ: Այս «վստահության շրջանակը» նրանց ընտանիքն է, ընկերները և հարևանները, բայց նաև ուսուցիչները և նրանց մասին հոգ տանող մարդիկ: Առավել հաճախ հանցագործները թաքնվում են իրենց զոհերի լռության ու տառապանքի հետևում: Մենք պետք է ճեղքենք բռնության ու լռության այս օղակը:

Մենք պետք է նաև զգոն լինենք ու գործելու պատրաստ՝ առաջացած ու գնալով առավել տարածվող այնպիսի սպառնալիքների դեմ պայքարելու համար, ինչպիսիք են համացանցի միջոցով գրումինգը [սեռական ոտնձգ թյ ն կատարել նպատակով երեխաների վստահությունը ձեռք բերելը] և տեսախցիկների միջոցով երեխաների հանդեպ սեռական բռնության ուղիղ հեռարձակումը: Համացանցում տեղադրելն ու ծածկագրումը գաղտնիության լրացուցիչ շերտ են ավելացնում՝ թաքցնելով հանցագործներին ու դժվարացնելով անպատժելիության դեմ պայքարողների խնդիրը: Ուստի մենք պետք է արձագանքենք մարտահրավերին և միավորենք մեր ջանքերը: Խորհրդարանականները, տեղական իշխանությունները, կառավարությունները, ոստիկանությունը, կրթական հաստատություններն ու արդարադատության համակարգերը՝ բոլորն ունեն դերակատարում և համագործակցելու պարտականություն:

Եվրոպայի խորհուրդն իրավամբ կարող է հպարտանալ իր նվաճումներով չորս տարվա եռանդուն քարոզարշավում՝ շնորհիվ քարոզարշավի երեք թևերի միացյալ ջանքերի և բազմաթիվ շահագրգիռ կողմերի աջակցության: Բոլոր անդամ պետություններն այժմ արդեն ստորագրել են Լանցարոտեի կոնվենցիան, և վավերացումների թիվն աճում է: Այնուամենայնիվ, մենք չենք կարող կանգ առնել, քանի որ դեռ պետք է հասնենք ՀԻՆԳԻՑ ՄԵԿԸ քարոզարշավի նպատակին՝ դադարեցնել երեխաների հանդեպ սեռական բռնությունը: Մենք պետք է շարունակենք զարգացնել տեղեկացվածության մակարդակը բարձրացնելունն ուղղված մեր հաղորդակցման գործիքները (ինչպիսին է 2013 թվականի «Լիճը» տեսահոլովակը¹), թափ հաղորդենք Լանցարոտեի կոնվենցիայի կարևոր վավերացումներին և վերացնենք դրա կենսագործման թերությունները:

Ուստի ձեր առջև գտնվող ձեռնարկը մշակված է որպես գործնական միջոց, որը պատկերացում է տալիս, թե ինչպես կարելի է առավել լավ ըմբռնել Կոնվենցիայի հավելյալ արժեքը: Այն ընդգծում է

1. Տե՛ս մեր վեբկայքը՝ <http://www.assembly.coe.int/oneinfive/video/default-EN.asp-nuif>:

նրբանկատ խնդիրներ, որոնք պետք է հաղթահարել ազգային օրենսդրությամբ, և տրամադրում է լավագույն գործելակերպի օրինակներ: Ես վստահ եմ, որ այս ձեռնարկը ձեզ համար կդառնա աղբյուր, որին կարելի է հղում կատարել բոլոր երեխաների գործով արդյունավետորեն զբաղվելու համար:

Որպես Խորհրդարանական վեհաժողովի նախագահ՝ ես կոչ եմ անում բոլոր խորհրդարանականներին՝ ջանք չխնայել Լանցարոտեի կոնվենցիան սատարելու համար և տեղեկատվ թյ ն տարածել մեր ՀԻՆԳԻՅ ՄԵԿԸ քարոզարշավի մասին՝ երեխաների հանդեպ սեռական բռնությանը վերջ տալու նպատակով: Մեր ջանքերը կօգնեն համախմբել լայն հասարակությանը, որպեսզի մեր երեխաները կարողանան երջանիկ ու ապահով մեծանալ:

Մենք նախընտրեցինք ազդեցություն գործել, հստակ ուղերձ հղել ամբողջ Եվրոպային, այն է՝ երեխաների հանդեպ սեռական բռնությունը, ավաղ, մտում է լայնատարած ու լուրջ խնդիր, որը սակայն մենք այլևս չենք հանդուրժելու: Մեր ձեռքերում է մեր երեխաների համար առավել ապահով միջավայր ստեղծելու կարողությունը՝ ազատ չարաշահումից ու տրավմաներից: Դա է արժեքավոր դարձնում մեր ընդհանուր ձգտումները:

Անն Բրասյոր
*Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական
վեհաժողովի նախագահ*

3. Ընդհանուր ակնարկ

*«Անխոս կսկիծը խիստ ուռած սրտին
գաղտնի փսփսում, դրդում է պայթել»*

Ուիլիամ Շեքսպիր

Ներածությունը և ձեռնարկի նպատակները

Վերջին տարիներին երեխաների սեռական շահագործման և սեռական չարաշահման խնդիրն սկսել է կարևոր տեղ զբաղեցնել Եվրոպայի խորհրդի և նրա անդամ պետությունների քաղաքական օրակարգում: Սեռական չարաշահումը մեծ տառապանքի աղբյուր է երեխաների համար: Բոլոր մտահոգ կողմերը պետք է պայքարեն դրա դեմ հավասար վճռականությամբ՝ միաժամանակ ձեռնարկելով հատուկ գործողություններ՝ կախված տվյալ չարաշահման կամ շահագործման կոնկրետ տեսակից:

2005 թվականի մայիսին Վարշավայում կայացած 3-րդ Գազաթափողովի ժամանակ Եվրոպայի խորհրդի պետությունների և կառավարությունների ղեկավարները պարտավորվեցին վերացնել երեխաների նկատմամբ բռնության բոլոր ձևերը և նրանց սեռական շահագործումը՝ ձեռնարկելով որոշակի գործողություններ և անհրաժեշտության դեպքում իրավական փաստաթղթեր մշակելով: Այդ որոշմանը հետամուտ լինելու նպատակով՝ 2006 թվականին Նախարարների կոմիտեն Հանցավորության հիմնախնդիրների հարցերով եվրոպական կոմիտեին (ՀՀԵԿ/CDPC) հանձնարարեց սեռական շահագործումից երեխաների պաշտպանության միջազգային գործող փաստաթղթերի կիրառման վերանայումը՝ նպատակ ունենալով գնահատել, թե արդյոք կա նոր միջազգային

փաստաթղթի կարիք և անհրաժեշտության դեպքում մշակել այդպիսի փաստաթուղթ:

Հետևելով անդամ պետությունների միջև համատարած համաձայնությանը՝ 2007 թվականի հոկտեմբերի 25-ին Լանցարտեում ստորագրմանը ներկայացվեց սեռական շահագործու ց և սեռական չարաշահ ց երեխաների պաշտպան թյան ամենաարդիական և համապարփակ փաստաթուղթը միջազգային մակարդակում: 2010 թվականի հուլիսի 1-ին ուժի մեջ մտավ Մեռականեջ մտավր՝ րիր ցնել բռնությունը երեխաների հանդեպ: Միասին մենք կարող ենք հասնել այդ նպատակին՝ ազն (CETS թիվ 201), որը նաև կոչվ մ է «Լանցարտեի կոնվենցիա»: Ցայսօր (2013 թվականի դեկտեմբեր), Կոնվենցիան վավերացրել է 29 անդամ պետություն և ստորագրել է 17 անդամ պետություն:

Կոնվենցիայի ինքնատիպությունն ու հավելյալ արժեքը դրա բազմակողմանի մոտեցման մեջ են: Այն նպատակ ունի կանխարգելելու երեխաների սեռական շահագործումն ու չարաշահումը, պաշտպանելու տուժող երեխաներին այդ հանցագործություններից և հետապնդելու հանցագործներին: Փաստաթուղթը կարելի է որակել որպես թե՛ համապարփակ և թե՛ պրոակտիվ, քանի որ այն ձգտում է լուծել սեռական բնույթի հանցագործությունների դեմ պայքարի տարբեր ասպեկտները, ինչպես նաև ներմուծում է դիտանցման մեխանիզմ՝ օգնելու կողմերին կատարել իրենց հանձնառությունները: Որոշակի պայմաններով Կոնվենցիայի կողմ կարող են դառնալ նաև այնպիսի պետություններ, որոնք Եվրոպայի խորհրդի անդամ չեն, ինչպես նաև Եվրոպական Միությունը:

Եվրոպացի խորհրդարանականների համար նախատեսված այս ձեռնարկը մշակվել է որպես երեխաների նկատմամբ սեռական բռնությունը դադարեցնելուն ուղղված՝ Եվրոպայի խորհրդի քարոզարշավի խորհրդարանական հարթակի մի մաս, որն ինքնին «Կառուցենք Եվրոպա երեխաների հետ և երեխաների համար» ծրագրի ասպեկտներից մեկն է: Քարոզարշավը, որը մեկնարկել է Հոռմում 2010 թվականի նոյեմբերին, նախնառաջ փորձում է խրախուսել Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ պետություններին ստորագրել, վավերացնել և կիրառել երեխաների

նկատմամբ սեռական բռնության դեմ պայքարի՝ Եվրոպայի խորհրդի փաստաթղթերը, այդ թվում նաև Լանցարոտեի կոնվենցիան: Երկրորդը, այն նպատակ ունի բարձրացնել հանրային իրազեկության ընդհանուր մակարդակը երեխայի վստահության շրջանակի ներսում սեռական բռնության ծավալի և այն կանխարգելելու ու այդ մասին հայտնելու եղանակների շուրջ:

Ձեռնարկը հիմնականում մշակված է երեխաների նկատմամբ սեռական բռնության բոլոր ձևերի վերաբերյալ խորհրդարանականների շրջանում առավել բարձր մակարդակով իրազեկությունը խթանելու նպատակով: Սա մի պատուհաս է, որի դեմ Եվրոպան պայքարում է երկար տարիներ: Այն նաև փորձում է խրախուսել բոլոր անդամ պետություններին ստորագրել, վավերացնել և կիրառել Լանցարոտեի կոնվենցիան՝ երեխաների նկատմամբ սեռական բռնության դեմ պայքարի մասին Եվրոպայի խորհրդի հիմնական փաստաթուղթը: Այդ նպատակով ձեռնարկը խորհրդարանականներին է տրամադրում գործնական միջոց, որը նրանք կարող են կիրառել իրենց աշխատանքում, իրենց խորհրդարաններում և ի դեմս իրենց երկրների կառավարությունների: Այն գործիք է, որը կարող է օգնել նրանց հասկանալ և խթանել այս նոր և լիովին նորարարական փաստաթուղթը, և որը նաև օրինակներ է ներկայացնում, թե ինչպես կարող են Կոնվենցիայի դրույթները փոխատեղվել ներպետական օրենսդրություններում:

Նախապատմություն

Երեխաների սեռական շահագործումն ու սեռական չարաշահումը կարող է համարվել երեխաների իրավունքների ամենադաժան ոտնահարումը, քանի որ այն ունի խորքային կարճաժամկետ և երկարաժամկետ հետևանքներ նրանց ֆիզիկական առողջության, հոգեբանական զարգացման և հոգեբանական բարեկեցության վրա: Արդեն ընդունված է համարել, որ նման գործողությունները հազվադեպ չեն, երբ հինգ երեխայից մեկն իր կյանքում առնվազն մեկ անգամ դառնում է սեռական բռնության զոհ: Մինչդեռ տարբեր աղբյուրներից ստացված թվերը՝ ուստիկանություն, դատական իշխանություն, առողջապահական ծառայություններ, ոչ

կառավարական կազմակերպություններ (ՈԿԿ), մարդասիրական ընկերակցություններ և այլ մարմիններ, լոկ սառցաբեկորի գազաթն են: Այդօրինակ գործողությունները հազվադեպ են ի հայտ գալիս կատարման պահին: Սովորաբար տուժողները դրանց մասին խոսում են մի քանի ամիս կամ նույնիսկ տարիներ անց: Հաճախ այնպես է պատահում, որ գաղտնիքը բացահայտվում է միայն այն ժամանակ, եթե ընդհանրապես բացահայտվում է, երբ տուժողները դառնում են չափահաս: Ըստ 2006 թվականի Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) կատարած հետազոտության՝ 18 տարին չլրացրած 150 միլիոն աղջիկ և 73 միլիոն տղա ենթարկվել են բռնի սեռական հարաբերությունների կամ սեռական բռնության այլ ձևերի: Ըստ Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) 2000 թվականի հաշվարկների՝ մոտ 1.8 միլիոն երեխա ենթարկվել է սեռական շահագործման մարմնավաճառության և պոռնկագրության ոլորտում: ՅՈՒՆԻՍԵՖ-ը գնահատում է, որ տարեկան առնվազն 2 միլիոն երեխա ամբողջ աշխարհում ընկնում է սեռական արդյունաբերության թակարդը:

Ըստ այս ոլորտի հետազոտողների՝ անչափահասների սեռական չարաշահումը վերաբերում է երեխաների կամ անչափահասների ցանկացած ընդգրկմանը սեռական գործողություններում, որոնք նրանք ունակ չեն հասկանալ, որոնք անհամապատասխան են նրանց տարիքին և հոգեւսեռական զարգացման փուլին և որոնցում նրանք մասնակցել են ստիպողաբար՝ բռնության կամ գայթակղության միջոցով, կամ որոնք ոտնահարել են ընտանիքի անդամների դերերի հետ կապված սոցիալական տաբուները:² Միջազգային իրավական փաստաթղթերում «երեխաների սեռական չարաշահում» հասկացությունը նշանակում է վատ վերաբերմունք տարբեր գործողությունների միջոցով, որոնք ենթադրում կամ չեն ենթադրում ֆիզիկական շփում, ինչպես օրինակ՝ արյունապղծությունը, բռնաբարությունը, հարկադրված փոխադարձ սեռական շփումը,

2. Այս հարցի առաջին ուսումնասիրողների թվում էին՝ R. Krugman and D. P. Jones ("Incest and other forms of sexual abuse" in Battered Child, University of Chicago, 1980) և R. S. Kempe and C. H. Kempe (The Common Secret: Sexual Abuse of Children and Adolescents. New York, NY, W. H. Freeman and Co., 1984):

երոտիկ համբույրը, մարմնավաճառությունը, պոռնկագրությունը, մերկամոլությունը, մասնակցությունը պոռնկագրական ներկայացումների և միջնորդությունը սեռական նպատակներով:³ Քանի որ այս գործողությունները ենթադրում են ֆիզիկական և հոգեբանական բռնություն, ապա քրեական առումով դրանք համարվում են կանխամտածված հարձակում կամ բռնաբարություն:

Առավել հաճախ սեռական բռնությունը կիրառվում է երեխայի մերձավոր շրջապատի անձանց կողմից, ովքեր վայելում են երեխայի վստահությունը, ինչպիսին է ընտանիքի անդամը կամ մոտ բարեկամը կամ երեխայի կրթական միջավայրից որևէ մեկը: Բռնության դեպքերի մոտ 80%-ը տեղի է ունենում այդ համատեքստում: Երեխաների համար շատ դժվար է արտահայտել իրենց փորձառությունը բառերով: Սեռականության և բռնության մասին խոսելն առաջ է բերում ամոթի զգացում թե՛ երեխաների մոտ անձնապես և թե՛ նրանց ընտանիքների համար: Երեխաները հաճախ մատնվում են կարկամածության այն հոգեբանական վերահսկման պատճառով, որ իրենց նկատմամբ իրականացնում է իրենց բռնարարը և, վախենալով հաշվեհարդարից, նրանք լուռ տառապում են: Նրանց համար ծայրահեղ դժվար է բացահայտել չարաշահումը, երբ նրանք սերտ հարաբերությունների մեջ են չարաշահող անձի հետ կամ երբ նրանք կախում ունեն նրանից գոյատևման համար: Երբեմն տուժողները տեղյակ չեն այն ուղիներին և միջոցներին, որոնք մատչելի են իրենց համար՝ նշված գործողությունների մասին հաղորդելու առումով կամ չունեն վստահություն և հավատ, որ դա որևէ նպատակի կծառայի: Երեխաների սեռական շահագործման և սեռական չարաշահման մասին անտեղյակ լինելու պատճառ կարող է հանդիսանալ այն միջավայրը, որտեղ գործողությունները կատարվում են (երեխաների մարմնավաճառության և թրաֆիկինգի գաղտնի ցանցեր, փակ ընտանեկան շրջաններ, որտեղ տաբուներ կան, երեխայի բարօրությանը և անչափահասների արդարադատության համակարգին առնչվող ինստիտուցիոնալ միջավայրեր, որբատներ,

3. Լանցարտտեի կոնվենցիան սահմանում է այս նոր հանցագործությունը, որը կոչվում է «սեռական ընտելացում»:

հաշմանդամություն կամ հոգեկան խնդիրներ ունեցող երեխաների համար նախատեսված հաստատություններ, անօթևան երեխաներ և այլն):

Երեխաները, ովքեր տուժել են չարաշահումից, պահանջում են հատուկ ուշադրություն և պաշտպանություն՝ նկատի ունենալով նրանց առանձնահատուկ բնույթը, որը բխում է նրանց խոցելիությունից կապված տարիքի, երբեմն՝ էթնիկ ծագման, հաշմանդամության կամ սոցիալական կարգավիճակի, ինչպես նաև չափահասներից նրանց կախվածության հետ: Երեխաների անվտանգությունն ու շահերը պետք է մեծապես արտացոլվեն նրանց վերաբերող քաղաքական քննարկումներում և որոշումներում, ինչպես նաև այն վերապատրաստման դասընթացներում, որոնք նախատեսված են երեխաների հետ և նրանց համար աշխատողներին: Երեխաների նկատմամբ սեռական բռնության խնդիրը կարելի է լուծել տարբեր տեսանկյուններից՝ ներառյալ մարդու իրավունքների, հանրային առողջապահության, կրթական համակարգի, արդարադատության համակարգի, ինչպես նաև նրա՝ տառապանքի վրա վատնած տարիների թվի տեսանկյունից: Բացասական հետևանքները կարող են շատ ծանր անդրադառնալ հասարակության վրա՝ սեռական բռնության գոհերի և հանցագործների համար բժշկական և հոգեբուժական խնամքի հետ կապված ծախսերի, քրեական արդարադատության համակարգի, սոցիալական բարօրության կազմակերպությունների գործարկման և այլ ծախսերի առումով:

Սեռական բռնության դեմ արդյունավետ պայքարելու համար անհրաժեշտ կլինի, որ յուրաքանչյուր անդամ պետություն պարզի իր առկա օրենսդրական և կառուցվածքային թերությունները և բավարար միջոցներ տրամադրի ռիսկային գործոնները վերացնելու և իրավիճակը փոփոխելու համար՝ տեղեկատվական և կանխարգելման քարոզարշավների, դասավանդման և մասնագիտական վերապատրաստման ռազմավարության, տուժողների համար նախատեսված աջակցության և փոխհատուցման ծրագրերի և երեխաների հետ ամուր հարաբերություններ ու վստահություն ստեղծելունն ուղղված քաղաքականության, ինչպես նաև ոչ բռնի մոտեցումների

մշակման միջոցով: Երեխաների կյանքի, արժանապատվության, ֆիզիկական ամբողջականության և զարգացման իրավունքները երաշխավորելու նպատակով պետությունները պետք է միջամտեն անձի անձնական կյանքի ամենագաղտնի ոլորտներից մեկին:

Նույնիսկ այն երկրներում, որտեղ առկա է իրազեկության բարձր մակարդակ և որտեղ արդեն քաղաքական ծրագրեր են մշակվել ու իրականացվել, անշուշտ, չեն գտնվել կամ օգտագործվել գործողության բոլոր հնարավորությունները: Հետևաբար, միջազգային և եվրոպական համագործակցությունը լավագույն փորձի փոխանակման նպատակով շարունակում է կարևոր միջոց հանդիսանալ: Բացի այդ, պետությունների միջև և Եվրոպայի ու Ինտերպոլի հետ միջազգային համագործակցությունը կենսական նշանակություն ունի, եթե արդյունավետ պայքար է մղվի այդ քրեական գործունեության դեմ, որը հաճախ տեղի է ունենում անդրազգային մակարդակում: Մարդիկ, ովքեր շահագործում և չարաշահում են երեխաներին, մշակել են նոր մեթոդներ և չարաշահում են նոր տեխնոլոգիաներ, օրինակ՝ ինտերնետը և նոր սերնդի բջջային հեռախոսները, իրենց գործողություններն իրականացնելու համար: Հատկապես սարսափելի է, որ երեխաների սեռական շահագործումն ավելի ու ավելի շատ է կազմակերպվում և իրականացվում առևտրային հիմունքներով:

Ոլորտի հիմնական միջազգային ստանդարտները

Միջազգային համայնքն ընդունել է մի շարք փաստաթղթեր երեխաների իրավունքների պաշտպանության վերաբերյալ

- ▶ Երեխայի իրավունքների մասին Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիան (1989թ.), որի 20-ամյակը նշվեց 2009 թվականի նոյեմբերին: 34-րդ հոդվածը կոդմ պետություններից պահանջում է երեխաներին պաշտպանել «սեռական շահագործման բոլոր ձևերից և սեռական չարաշահումից», որոնք ներառում են երեխային ցանկացած ապօրինի սեռական գործունեության դրդելը կամ հարկադրելը, շահագործման նպատակով երեխաներին մարմնավաճառության կամ պոռնկագրական նյութերի մեջ օգտագործելը,

- ▶ Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի կամընտիր արձանագրությունը մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության և մանկական պոռնկագրության մասին (2000թ.) լրացնում է կոնվենցիան՝ քրեականացնելով այդ գործողությունները, այդ թվում՝ նման գործողություններ կատարելու փորձերը կամ դրանց մեջ մասնակցություն ունենալը,
- ▶ Մանկական աշխատանքի վատթարագույն ձևերի արգելման և անհապաղ վերացման մասին Աշխատանքի միջազգային կազմակերպության թիվ 182 կոնվենցիան (1999թ.) ներառում է 3.բ հոդվածը՝ «մարմնավաճառության, պոռնկագրական արտադրության կամ պոռնկագրական ներկայացումների համար երեխային օգտագործելը, հավաքագրելը կամ առաջարկելը» մանկական աշխատանքի վատթարագույն ձևերի սահմանման մեջ,
- ▶ Երեխաների սեռական շահագործման և մանկական պոռնկագրության դեմ պայքարի մասին Եվրոպական Միության խորհրդի շրջանակային որոշումը (2004/68/JHA) պարտավորեցնում է անդամ պետություններին քրեականացնել սեռական շահագործմանն առնչվող հանցագործությունները, մասնավորապես՝ մարմնավաճառությունը և ուժի ու սպառնալիքի կամ վստահության ու հեղինակության դիրքի օգտագործումը սեռական հարաբերությունների համար: Մարդիկ, ովքեր կատարում են մանկական պոռնկագրությանն առնչվող հանցագործություններ, անկախ նրանից, թե արդյոք նշված հանցագործությունները ենթադրում են համակարգչային համակարգի կիրառում թե՛ ոչ, նույնպես պետք է ենթարկվեն քրեական պատասխանատվության այնպես, ինչպես նրանք, ովքեր հրահրում, օժանդակում, դրդում կամ փորձում են իրականացնել վերոնշյալ հանցագործությունները,
- ▶ Քրեական վարույթում տուժողի կարգավիճակի մասին Եվրոպական Միության խորհրդի շրջանակային որոշումը (2001/220/JHA) ստեղծում է հատուկ պաշտպանական միջոցներ հանցագործություններից տուժողների համար: Պետություններից պահանջվում է խրախուսել վարույթներում

ներգրավված կամ տուժողների հետ աշխատող անձնակազմին հատուկ վերապատրաստումը, մասնավորապես՝ առավել խոցելի խմբերի հետ աշխատելու հետ կապված,

- ▶ Առևտրային նպատակներով երեխաների սեռական շահագործման դեմ Համաշխարհային երեք կոնգրեսների հռչակագրերը, որոնք ընդունվեցին Ստոկհոլմում 1996 թվականին, Յոկոհամայում 2001 թվականին և Ռիո դե Ժանեյրոյում 2008 թվականին: Ստոկհոլմի Հռչակագիրը և Գործողությունների ծրագիրը պարունակում է հանձնարարականներ՝ քրեականացնելու երեխաների սեռական առևտրային շահագործումը, ներմուծելու քրեական պատիժներ այդպիսի հանցագործություններ կատարողների համար և խրախուսելու պետություններին ներդնել արտատարածքային օրենսդրություն: Այն նաև ամրագրում է երեխայի նկատմամբ բարյացկամ դատական ընթացակարգերի չափանիշները և տուժողների իրավական, սոցիալական և բժշկական օգնություն ստանալու իրավունքը: Յոկոհամայի գլոբալ պարտավորությունը, որն ընդունվել է Համաշխարհային երկրորդ կոնգրեսին, վերահաստատում է Ստոկհոլմում ներկայացված հանձնարարականները, ինչպես նաև ամրագրում, որ բոլոր մտահոգված կողմերը պետք է պատշաճ միջոցներ ձեռնարկեն նոր տեխնոլոգիաների բացասական ասպեկտներին անդրադառնալու համար, մասնավորապես՝ ինտերնետում մանկական պոռնկագրությանը: Համաշխարհային երրորդ կոնգրեսն ընդդեմ Երեխաների և անչափահասների սեռական շահագործման դեմ, որը տեղի ունեցավ Ռիո դե Ժանեյրոյում, մեծ հանձնառություն ամրագրեց իր Հռչակագրում և Գործողության կոչում՝ շարունակելու պայքարել և պայքարը տարածելու սեռական շահագործման ոչ միայն առևտրային, այլև այլ ձևերի նկատմամբ,
- ▶ Երեխաների նկատմամբ սեռական չարաշահման, սեռական շահագործման և մանկական պոռնկագրության դեմ պայքարի հրահանգն ընդունվել է Եվրոպական խորհրդարանի և խորհրդի կողմից 2011 թվականի նոյեմբերին, որով ուժը կորցրած է ճանաչվում 2004/68/JHA շրջանակային որոշումը:

Այն ներառում է Լանցարտեի կոնվենցիայի ներդրումը, որն այն ճանաչում է որպես սեռական շահագործումից և սեռական չարաշահումից երեխաներին պաշտպանելու ոլորտում ամենաբարձր միջազգային չափանիշը: Այն նաև ներառում է մի շարք այլ կետեր, որոնք հավելյալ արժեք են պարունակում, ինչպիսիք են՝ նոր հանցագործությունների ներառումը քրեական իրավունքում, քրեական պատիժների առավել լայն ներդաշնակեցումը, անդամ պետություններին առաջադրվող այնպիսի միջոցառումներ մշակելու պահանջը, որոնք կկանխեն հանցագործների կողմից երեխաների հետ կանոնավոր շփում ենթադրող գործողությունների իրականացումը, ինչպես նաև տուժող երեխաների համար պատիժը բացառող դրույթի ներմուծումը, ընդդատական կանոնների ուժեղացումը անդամ պետության տարածքից դուրս տեղի ունեցած գործողությունների համար դատավճռի իրականացումը հնարավոր դարձնելու նպատակով և տուժողների ու նրանց ընտանիքների պաշտպանության բարելավումը:

Եվրոպայի խորհրդի գործունեությունն այս ոլորտում

Սեռական բռնության և շահագործման բոլոր ձևերից պաշտպանված լինելու երեխաների իրավունքը վկայակոչվել է Եվրոպայի խորհրդի տարբեր փաստաթղթերում ու տեքստերում և բարձր մակարդակում քննարկումների կանոնավոր թեմա է:

- ▶ Եվրոպայի խորհրդի Սոցիալական խարտիան (1961թ., ETS թիվ 35) 7-րդ հոդվածում նախատեսում է հատուկ պաշտպանություն ֆիզիկական և բարոյական վտանգներից, որոնց ենթակա են երեխաները և երիտասարդները: Վերանայված սոցիալական խարտիայի 17-րդ հոդվածի 1.բ ենթապարբերությունում (1996թ., ETS թիվ 163) նշվում է, որ կառավարությունները պարտավոր են ձեռնարկել բոլոր համապատասխան և անհրաժեշտ միջոցները, որոնք ուղղված են պաշտպանելու երեխաներին և երիտասարդներին արհամարհանքից, բռնությունից կամ շահագործումից,

- ▶ Կիբեռհանցագործությունների մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիան (2001թ., ETS թիվ 185) պետություններից պահանջում է քրեականացնել մանկական պոռնկագրությունը, երբ գործածվել է համակարգչային ցանց կամ համակարգ: Այդ գործողությունները ներառում են մանկական պոռնկագրության արտադրությունը, առաջարկումը կամ մատչելի դարձնելը, տարածումը կամ փոխանցումը, հայթայթումը և տնօրինումը,
- ▶ Մարդկանց թրաֆիկինգի դեմ պայքարի գործողությունների մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիա (2005թ., CETS թիվ 197): Մարդկանց թրաֆիկինգը 4-րդ հոդվածում սահմանելուց հետո Կոնվենցիան պետություններին խնդրում է այն հաստատել որպես քրեական հանցագործություն՝ հատուկ ուշադրություն դարձնելով 18 տարին չլրացած երեխաներին: Նրանց հավաքագրելը, փոխադրելը, փոխանցելը, թաքցնելը կամ ստանալը շահագործման նպատակով համարվում են մարդկանց թրաֆիկինգ, նույնիսկ երբ նրանց համաձայնությունն ստանալու համար չեն կիրառվել հարկադրանք, ուժ, խաբեություն կամ իշխանության չարաշահում,
- ▶ Մեռական շահագործումից երեխաների պաշտպանության վերաբերյալ Նախարարների կոմիտեի թիվ (2001)16 հանձնարարականն անդամ պետություններին կոչ է անում քրեականացնել երեխաների մարմնավաճառությունը, մանկական պոռնկագրությունն ու երեխաների թրաֆիկինգը սեռական նպատակներով: Այն ամրագրում է, որ պետությունները պետք է հատուկ միջոցներ ձեռնարկեն տուժող երեխաների համար դատական վարույթի ընթացքում և երաշխավորեն, որ նրանց իրավունքները պաշտպանված են վարույթի ամբողջ ընթացքում: Դատական մարմինները պետք է գերակայություն տան այն գործերին, որոնք ներառում են երեխաների սեռական շահագործում, և հոգ տանեն, որ քրեական վարույթ բերելու սահմանափակման ժամանակահատվածն սկսի գործել այն ժամանակ միայն, երբ տուժողը դառնա չափահաս: Այն նաև կոչ անում բարելավված միջազգային համագործակցության և արտադատարանական ընդդատության հաստատման՝ առանց երկակի քրեականության պահանջի,

- Եվրոպայի խորհրդի պետությունների և կառավարությունների ղեկավարների 3-րդ Գագաթաժողովին ընդունված Գործողությունների ծրագրում (Վարշավա, 2005թ.), պետությունների և կառավարությունների ղեկավարները հանձն առան հատուկ գործողություն ձեռնարկել երեխաների նկատմամբ բռնության բոլոր ձևերն արմատախիլ անելու ուղղությամբ՝ գործողությունների ծրագիր մեկնարկելու և անհրաժեշտության դեպքում իրավական փաստաթղթեր մշակելու միջոցով՝ այդ գործընթացին մասնակից դարձնելով քաղաքացիական հասարակությանը: Դրա արդյունքում էր, որ Եվրոպայի խորհուրդը մեկնարկեց մի ծրագիր, որը կոչվում էր «Կառուցենք Եվրոպա երեխաների համար և երեխաների հետ»⁴ (2006-2011թթ.) և դրա 2009-2011թթ. ռազմավարությունը, որի նպատակն է խթանել երեխաների իրավունքներն ու պաշտպանել նրանց բռնությունից: Ծրագրի հիմնական նպատակն է օգնել բոլոր համապատասխան որոշում կայացնողներին և դերակատարներին՝ մշակելու և իրականացնելու երեխաների իրավունքների պաշտպանությանը և երեխաների նկատմամբ բռնության կանխարգելմանն ուղղված ներպետական ռազմավարություն:

Ազգային խորհրդարաններին և Խորհրդարանական վեհաժողովին երեխաների նկատմամբ սեռական բռնության դեմ պայքարի ջանքերին մասնակից դարձնելը

Որպես քաղաքականության և օրենքի կերտողներ, խորհրդարանականները կենսական դեր ունեն այս էրևույթի դեմ պայքարում: Նրանց գործողության նպատակներն են՝

- Տարբեր եղանակներով խթանել Լանցարտեի կոնվենցիայի ստորագրումն ու ամբողջական վավերացումը, օրինակ
 - խորհրդարանական համապատասխան հարցումների նախաձեռնում,

4. http://www.coe.int/t/transversalprojects/children/default_en.asp.

- թեմայի շուրջ իրենց համապատասխան կառավարություններին հաստուկ հարցերի ուղղում,
 - ներպետական մակարդակում (իրենց խորհրդարաններում) և տեղական մակարդակում (իրենց համապատասխան ընտրատարածքներում) քննարկումների կազմակերպում,
 - իրենց խորհրդարանի փաստաթղթային կենտրոնում բոլոր համապատասխան փաստաթղթերը ձեռք բերելու հնարավորության ապահովում,
 - լայն հանրության հետ կապված ցանկացած նախաձեռնության (հոդվածներ մամուլում, միջոցառումներ դպրոցներում և այլն)⁵ խթանում և օժանդակում,
- ▶ ստեղծել երեխաների հարցերով կոմիտե ազգային խորհրդարանում, եթե այդպիսին արդեն ստեղծված չէ, խնդրի հանգամանալի դիտանցում իրականացնելու նպատակով,
 - ▶ երաշխավորել ներպետական օրենսդրության համապատասխանությունն այս ոլորտում միջազգային հանձնառություններին, մասնավորապես՝ Լանցարոտեի կոնվենցիային, երբ այն վավերացվի,
 - ▶ վերանայել և հզորացնել ազգային օրենսդրությունը՝ առավել մեծ ուշադրություն դարձնելով սեռական բռնության ենթարկված տուժող երեխաների կարիքներին դատական վարույթի ընթացքում և երեխաների լավագույն շահերի պաշտպանությանը՝ սկսած գործողությունների մասին նրանց հաղորդման պահից մինչև նրանց բավարար կերպով վերականգնումը, երբ վերսկսեն փոքրիշատե բնականոն կյանք վարել միաժամանակ պաշտպանված լինելով ավելի վաղ տեղի ունեցած չարաշահումից,
 - ▶ հզորացնել երեխաների նկատմամբ սեռական բռնության վերացման վերաբերյալ օրենսդրությունը և երաշխավորել

5. Տես նաև Միջխորհրդարանական միության և ՄԱՄՀ-ի կողմից վերջերս տպագրված և չափազանց կարևոր հրապարակումը: *Երեխաների դեմ ուղղված բռնության վերացում – Ձեռնարկ խորհրդարանականների համար*, No. 13 – 2007, որը սահմանում է մի շարք հնարավոր միջոցներ, որոնք կարող են ընդունվել խորհրդարանականների կողմից:

դրա արդյունավետ կիրառումը՝ անհրաժեշտության դեպքում խստացնելով պատիժները, առանց որոնց սեռական բռնության արգելումն աննպատակ կլինի,

- ▶ ուսումնասիրել վարույթ սկսելու համար սահմանափակման ժամկետների խնդիրը՝ նկատի ունենալով հանցագործության խորությունը հաշվի առնելու համար դրանց երկարաձգումը, և դրանց հաշվարկն սկսել միայն այն ժամանակ, երբ տուժող երեխան չափահաս է դարձել,
- ▶ ամրապնդել օրենսդրությունը՝ հնարավոր կամ նույնիսկ պարտադիր դարձնելու երեխաների հետ և նրանց համար աշխատող, անձանց բոլոր կատեգորիաների վերապատրաստումը երեխաների սեռական շահագործմանն ու սեռական չարաշահմանն առնչվող հատուկ խնդիրների ոլորտում, և թույլատրելու դպրոցներում տեղեկատվական քարոզարշավների կազմակերպումը երեխաների համար,
- ▶ ընդունել օրենսդրություն, որը հնարավորինս կհամապատասխանի եվրոպական այլ երկրների օրենսդրությանը՝ նպատակ ունենալով ձեռք բերել ավելի լայն ներդաշնակեցում, ինչը կնպաստի երեխաների պաշտպանությանն ու դյուրին կդարձնի արդյունավետ միջազգային համագործակցությունը,
- ▶ տրամադրել բավարար միջոցներ՝ նախնառաջ կանխարգելելու երեխաների դեմ սեռական բռնությունը և պայքարելու դրա դեմ, և երկրորդը՝ փոխհատուցելու տուժողներին, նույնիսկ եթե անհրաժեշտ են նաև նախաձեռնություններ հանցագործների վերականգնման համար,
- ▶ ստեղծել տվյալների հավաքագրման ներպետական համակարգ՝ օգնելու բացահայտել խոցելի խմբերն ու տուժողների թիվը,
- ▶ ստեղծել անկախ մարմին, որը պատասխանատու կլինի երեխաների իրավունքները խթանելու համար, ինչպես նաև արագ արձագանքման և այլ օժանդակ ծառայություններ՝ երեխաներին կամ ցանկացած այլ անձի, ով ցանկանում է հաղորդում տալ դեպքի մասին, խորհրդատվություն տրամադրելու նպատակով:

Նպատակ հետապնդելով զարգացնել Եվրոպայի խորհրդի քարոզարշավի խորհրդարանական հարթությունը, պետք է իրականացվեն հետևյալ գործողությունները

- ▶ երեխաների նկատմամբ սեռական բռնությունը դադարեցնելուն ուղղված քարոզարշավում ներգրավված համապատասխան խորհրդարանականների ցանցի շրջանակում տեղեկատվության և փորձառության փոխանակում ,
- ▶ գործընկերությունների ստեղծում ներպետական և միջազգային մակարդակներում (մասնագիտական ընկերակցություններ, ոչ կառավարական կազմակերպություններ (ՈԿԿ-ներ), Երեխաների հարցերով օմբուդսմենների Եվրոպական ցանց (ԵՕԵՑ/ENOC), Միավորված ազգերի կազմակերպություն, Եվրոպական Միություն, Միջխորհրդարանական միություն (ՄԽՄ/IPU), և այլն),
- ▶ Եվրոպական հաստատությունների լոբինգին աջակցություն՝ խթանելու երեխաների իրավունքների և շահերի պաշտպանությունը,
- ▶ ազգային ռազմավարության մշակմանը նպաստում, որը նպատակաուղղված է երեխաների խոցելիության կրճատմանն ու նրանց անվտանգության մեծացմանը (օրինակ՝ կանխարգելող քարոզարշավների միջոցով),
- ▶ այն պետություններին տեխնիկական և իրավական՝ աջակցության տրամադրում, որոնք դիմում են դրա համար՝ օգնելու նրանց նշված խնդիրը լուծելու նպատակով օրենսդրական բարեփոխումներ ներմուծել,
- ▶ հաղորդակցության և քարոզարշավների գործիքների ստեղծում, որոնք մատչելի կլինեն ներպետական մակարդակում (սույն ձեռնարկը, USB կրիչներ, որոնք կպարունակեն նշված թեմայով օրենսդրական փաստաթղթեր և քարոզարշավների նյութեր):

Նախքան Լանցարտոտի կոնվենցիայի դրույթներն առավել խորագնին ուսումնասիրելը, պետք է նաև ուշադրություն դարձնել հաստատություններում երեխաների նկատմամբ

չարաշահման մասին Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի վերջին՝ թիվ 1934 (2010) հանձնարարականին, որը երաշխավորում է տուժողների լրիվ պաշտպանություն՝ ներառելով մի շարք առաջարկություններ անդամ պետություններին և նրանց խորհրդարաններին՝ կապված հնարավոր օրենսդրական, վարչական և քաղաքական գործողությունների հետ: Ինչպես Միավորված ազգերի կազմակերպության տարբեր մարմինները, այնպես էլ Խորհրդարանական վեհաժողովը համարում է, որ օրենսդրական բարեփոխումները հանդիսանում են երեխաների լիիրավ պաշտպանության նախապայմանը, սակայն դրանք պետք է համալրվեն այլ միջոցառումներով, որոնք կհետապնդեն կանխարգելման, հայտնաբերման, հետաքննման և բուժման նպատակ:⁶

Հանձնառու, համընդհանուր և միջազգայնորեն համակարգված գործողության միջոցով «երեխաների չարաշահման պատկերների» դեմ պայքարի վերաբերյալ իր թիվ 1834 (2011) բանաձևում և թիվ 1980 (2011) հանձնարարականում Խորհրդարանական վեհաժողովը նաև կոչ է արել մանկական պոռնկագրության և դրան առնչվող հանցագործությունների դեմ առավել հաստատակամ գործողությունների իրականացմանը և հրավիրել է Եվրոպայի խորհրդին մշակել Լանցարոտեի կոնվենցիայի լրացուցիչ արձանագրություն:

6. Corinne May-Chahal, Maria Herczog (co-ordinators): Child sexual abuse in Europe, Council of Europe Publishing (2004).

4. Մեռական շահագործումից և սեռական չարաշահումից երեխաներին պաշտպանելու մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիա (Լանցարտտեի կոնվենցիա) (CETS թիվ 201)

Լանցարտտեի կոնվենցիան սեռական բնույթի հանցագործությունների կանխարգելման առումով կարևորագույն քայլ է դեպի առաջ: Այն երաշխավորում է երեխաների արդյունավետ և համապարփակ պաշտպանությունը սեռական շահագործումից և սեռական չարաշահումից՝ նաև անդրադառնալով այդ հանցագործությունների ենթադրյալ հանցագործների նկատմամբ իրավական վարույթին: Տեքստը համախմբում է ոլորտում առկա չափանիշներն ու լրացնում որոշակի բացերը: Առաջին անգամ է, որ միջազգային պայմանագիրը սահմանում և քրեականացնում է երեխաների սեռական չարաշահումը այդիպիսի ընդգրկուն ձևով: Տեքստի մյուս ուժեղ կողմերից են՝ կանխարգելման, երեխաների և տուժողների պաշտպանության միջոցների լայն սպեկտրի շեշտադրումը, 18 տարին չլրացած բոլոր երեխաների վկայակոչումը և բռնության այնպիսի նոր ձևերի ներառումը, ինչպիսիք են տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) միջոցով երեխաների շահագործումը: Եվ վերջապես, Կոնվենցիան ներառում է հզոր դիտանցման մեխանիզմ՝ կողմերի կողմից նշված դրույթների արդյունավետ կիրառումը երաշխավորելու և դրանց համապատասխանությունն ապահովելու նպատակով:

Կոնվենցիայի նպատակը

Սույն Կոնվենցիան ունի երեք հիմնական նպատակ՝

- ▶ երեխաների սեռական շահագործման և սեռական չարաշահման կանխարգելումը և դրանց դեմ պայքարը,
- ▶ սեռական շահագործումից և սեռական չարաշահումից տուժող երեխաների իրավունքների պաշտպանությունը,
- ▶ այս երևույթի դեմ պայքարում ներպետական և միջազգային համագործակցության խթանումը:

Խտրականության բացառման սկզբունքը

Կոնվենցիան արգելում է խտրականությունը (վերաբերմունքի տարբերակում, որը չունի օբյեկտիվ և ողջամիտ հիմնավորում) կողմերի կողմից իր դրույթների կիրառման ոլորտում, մասնավորապես կապված տուժած երեխաների իրավունքների պաշտպանության նպատակով միջոցառումների իրականացման հետ: Խտրականության հիմքերի ցուցակը նույնն է, ինչ որ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 14-րդ հոդվածում և դրա թիվ 12 Արձանագրությունում ներառված ցուցակը, այն է՝ սեռը, ռասան, մաշկի գույնը, լեզուն, կրոնը, քաղաքական կամ այլ հայացքներ, էթնիկ կամ սոցիալական ծագումը, ազգային փոքրամասնությունը պատկանելությունը, գույքային վիճակը, ծնունդը կամ այլ դրություն: Տեքստում ներառված է նաև երեք այլ հիմք՝ սեռական կողմնորոշումը, առողջական վիճակը և հաշմանդամությունը:

Սահմանումներ

Չնայած Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների օրենսդրական բազմազանությանը՝ սույն Կոնվենցիայի նպատակներով համաձայնություն է ձեռք բերվել ընդհանուր սահմանումների շուրջ՝

- ▶ «երեխա»՝ հիմք ընդունելով Երեխայի իրավունքների մասին Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիան և Մարդկանց թրաֆիկինգի դեմ պայքարի գործողությունների

մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիան, «երեխա» նշանակում է 18 տարին չլրացած ցանկացած անձ: Անհրաժեշտ է նշել, որ Լանցարոտեի կոնվենցիայի որոշակի հոդվածներում մատնանշված է այլ տարիք սեռական գործողություններում ներգրավվելու իրավական տարիքը, երբ նման գործողությունները չեն համարվում քրեականորեն պատժելի հանցանք: Սեռական գործողություններին համաձայնություն տալու տարիքը Եվրոպայում տատանվում է 13-18 տարեկան միջակայքում: Իսպանիան ունի համաձայնության ամենացածր տարիքային շեմը (13 տարեկան), իսկ Թուրքիան և Մալթան ամենաբարձրը (18 տարեկան),

- ▶ «երեխաների սեռական շահագործում և սեռական չարաշահում»՝ Կոնվենցիան փորձում է ներառել չարաշահումը տուժողի ընտանիքի կամ մերձավոր սոցիալական շրջապատի մակարդակով, ինչպես նաև առևտրային կամ շահույթի հետապնդման նպատակով իրագործված գործողությունները: Ներառված են վարքի հետևյալ կատեգորիաները՝ սեռական չարաշահում, երեխաների մարմնավաճառություն, մանկական պոռնկագրություն, երեխաների սեռական այլասերում և սեռական բնույթի գործողություններին դրդելը: Հիմնարար գաղափարն այն է, որ անչափահասների նկատմամբ բոլոր սեռական հանցանքները պետք է առանձնահատուկ կերպով քրեականացվեն,
- ▶ «տուժող»՝ տուժողն այն երեխան է, ով ենթարկվել է Կոնվենցիայում թվարկված հանցագործություններից որևէ մեկին: Անհրաժեշտ է նշել, որ սեռական շահագործման կամ սեռական չարաշահման փաստերը չպետք է հաստատվեն նախքան երեխայի՝ տուժող համարվելը:

Երեխայի նկատմամբ սեռական չարաշահման վերաբերյալ այլ սահմանումներն անհրաժեշտ է ուսումնասիրել խորությամբ և բնորոշել տվյալ մշակութային համատեքստում, որոնք նաև Կոնվենցիայի մշակման ընթացքում հանդիսացել են հակասական քննարկումների թեմա կողմերի միջև: Սա վերաբերում է օրինակ՝ ընտանիքներում «բնականոն» և չարաշահող վարքի միջև

սահմաններին, երեխաների շրջանում «բնականոն» սեռական հետազոտման և այլ անչափահասների կողմից իրականացված չարաշահման միջև («հասակակիցների կողմից չարաշահում»), կամ փոխհամաձայնությամբ տեղի ունեցած սեռական հարաբերությունների և այն գործողությունների միջև, որոնք եղել են «հարկադրված» ուժերի անհավասարաչափ բաշխման համատեքստում (ինչպես օրինակ՝ սեռական հարաբերությունները մանկավարժի կամ ուսուցչի հետ):⁷

Կանխարգելիչ միջոցները

Երեխաներին սեռական շահագործման և սեռական չարաշահման բոլոր ձևերից պաշտպանելու նպատակով տեքստում թվարկված են մի շարք կանխարգելիչ միջոցներ, որոնք պետք է կիրառվեն ներպետական մակարդակում: Դրանք ներառում են այն միջոցները, որոնք միտված են մասնագետների և հանրության շրջանում իրազեկության բարձրացմանը, երեխաների հետ աշխատող անձանց վերապատրաստման կազմակերպմանը և երեխաներին դպրոցում տեղեկատվությամբ ապահովմանը:

Երեխաների հետ աշխատող անձանց աշխատանքի ընդունումը, վերապատրաստումը և իրազեկության բարձրացումը

Անչափահասների նկատմամբ սեռական բռնությունը հաճախ պարուրված է գաղտնիության քողով, ուստի հաճախ դժվար է հայտնաբերվում: Այն կարող է հայտնաբերվել միայն այնպիսի միջավայրում, որը սատարում է թափանցիկությունը, զգոնությունը և իրական օժանդակությունը: Կոնվենցիան կողմերից պահանջում է ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ երաշխավորելու, որ այն անձինք, ովքեր մշտական շփում ունեն երեխաների հետ, բավարար չափով տեղեկացված են երեխաների իրավունքներին, որոնք ամրագրված են ներպետական և միջազգային փաստաթղթերով, և իրազեկ են սեռական շահագործման և սեռական չարաշահման խնդիրներին,

7. Corinne May-Chahal, Maria Herczog (co-ordinators): Child sexual abuse in Europe, Council of Europe Publishing (2004).

դրանց հետևանքներին և երեխաների կողմից տրվող հնարավոր ազդանշաններին: Սեռական բռնության դեպքեր բացահայտելու համար երեխաների հետ աշխատող անձինք պետք է իրազեկ լինեն, թե ինչից է անհրաժեշտ զգուշանալ: Այս դրույթով նախատեսված անձանց կատեգորիաները ներառում են նրանց, ովքեր աշխատում են երեխաների հետ կրթական, առողջապահության, սոցիալական պաշտպանության, դատական և իրավապահ, ինչպես նաև սպորտի, մշակույթի և հանգստի ոլորտներում, մարդիկ, ովքեր կամավոր աշխատանք են կատարում և խնամատար ընտանիքները: Ուստի կողմերին առաջարկվում է առավել խիստ վերահսկողություն սահմանել այն մասնագիտությունների տեր մարդկանց աշխատանքի ընդունման փուլում, որոնք ենթադրում են երեխաների հետ կանոնավոր շփում՝ երաշխավորելու, որ նշված թեկնածուները դատապարտված չեն եղել երեխաների սեռական շահագործման կամ սեռական չարաշահման համար:

Երեխաների կրթությունը

Ծնողները երեխաներին ամենամոտ մարդիկ են: Առաջին հերթին նրանց գործն է ստեղծել կայուն, սիրով և վստահությամբ լի փոխհարաբերություններ իրենց երեխաների հետ, կրթել նրանց սեռական խնդիրների մասին ընդհանուր առմամբ և տեղեկացնել սեռական շահագործման և սեռական չարաշահման վտանգներին մասնավորապես, և նրանց մեջ սերմանել անկախության զգացում և ուժ՝ դիմադրելու և կանխելու ցանկացած սեռական ոտնձգություն, որին նրանք կարող են ենթարկվել: Այնուամենայնիվ, որոշ ծնողների համար սա կարող է դժվար լինել, և նրանք կարող են ցանկություն չունենալ նշված խնդիրը շոշափել իրենց երեխաների հետ: Այդ պատճառով, հատուկ չվկայակոչելով դպրոցները կամ պարտադիր չդարձնելով կրթական ծրագրերում նշված տեղեկատվության տրամադրումը, Կոնվենցիան խնդրում է կողմերին երաշխավորել, որ երեխաներն իրենց կրթության ընթացքում ստանան սեռական շահագործման ու սեռական չարաշահման հետ կապված վտանգների, ինչպես նաև ինքնապաշտպանության միջոցների մասին տեղեկություններ, որոնք հարմարեցված են նրանց զարգացող կարողություններին և չեն նվաստացնում

նրանց արժանապատվությունը չափահասների մոտ: Այդ տեղեկությունները կարող են տրամադրվել ոչ պաշտոնական շրջանակում՝ այցելությունների կամ հեռախոսային աջակցության միջոցով, ծնողների մասնակցությամբ կամ առանց նրանց մասնակցության: Այն նաև կարող է ունենալ սեռականության, ինքնորոշման, հնարավոր ռիսկերի և ինքնապաշտպանության ու օգնություն խնդրելու եղանակների մասին պարզ կրթության ձևով: Ինտերնետի և նոր սերնդի բջջային հեռախոսների ի հայտ գալու հետ միասին, որոնք հնարավոր են դարձնում տվյալների (նկարներ և տեսանյութեր) փոխանցումը, երեխաների համար խիստ կարևոր է տեղեկացված լինել իրենց անվտանգության նկատմամբ սպառնալիքներին՝ ինտերնետից օգտվելու ժամանակ:

Կանխարգելիչ միջամտության ծրագրերը կամ միջոցառումները

Կոնվենցիայում վկայակոչված կանխարգելիչ միջոցառումները ներառում են երեխաների նկատմամբ սեռական բնույթի հանցանք կատարելու մտավախություն ունեցող անձանց համար հնարավորություն մասնակցելու միջամտության ծրագրերին կամ միջոցառումներին, որոնք նախատեսված են գնահատելու և կանխարգելելու այդպիսի հանցանքներ կատարելու վտանգը: Այս հնարավորությունը հստակ անհրաժեշտ է, որովհետև այլապես երեխաները կմնան վտանգված, իսկ չարաշահման փուլը կարող է հարատևել: Այս տարբերակը կանխարգելիչ է իր նպատակով, և կիրառվում է այն անձանց նկատմամբ, ովքեր չեն հետախուզվում կամ հետապնդվում կամ պատիժ չեն կրում:

Լայն հասարակության համար միջոցառումները

Լայն հասարակության իրազեկությունը բարձրացնելու և սեռական բռնության տեսակների մասին տեղեկացնելու ռազմավարությունը կենսական կարևորություն ունի: Նշված խնդրի հետ կապված տեղեկատվական քարոզարշավների կազմակերպումը կօգնի համախմբել լայն հասարակությանը և ավելացնել զգոնությունը: Այնուամենայնիվ, ինչպես նշված է Կոնվենցիայում, պետությունները պետք է կանխարգելեն կամ

արգելեն այնպիսի նյութերի տարածումը, որոնք գովազդում են դրանցում նկարագրված հանցագործությունները:

Երեխաների, մասնավոր հատվածի, լրատվամիջոցների և քաղաքացիական հասարակության մասնակցությունը

Իրենց քաղաքականությունը ձևակերպելիս միայն մի քանի երկիր է աշխատում երեխաների պաշտպանության գործակալությունների հետ կամ ողջունում երեխաների ուղղակի մասնակցությունը: Մյուս երկրներն ավելի շուտ նախընտրում են համապատասխան տեղեկությունները հաղորդել երեխաներին, քան նրանց ներգրավել այդ տեղեկատվության մշակման գործընթացին:

Կոնվենցիան խրախուսում է երեխաների մասնակցությունը սեռական բռնությանի դեմ պայքարում՝ համաձայն իրենց զարգացման կարողությունների («հասունացման փուլի»):

Մասնավոր հատվածի (տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների, զբոսաշրջության և ճանապարհորդության, բանկային և ֆինանսական ոլորտներ) մասնակցությունը սեռական բռնության կանխարգելման ոլորտում կարող է նույնպես օգտակար լինել:

Կիբեռհանցագործությունների ի հայտ գալը նոր հարթություն է տեղափոխում սեռական բռնությունը, ուստիև կարևոր է ինտերնետին մուտք տրամադրողների և բջջային հեռախոսների ու որոնման համակարգերի օպերատորների ներգրավվումը կանխարգելման միջոցների և քաղաքականությունների մշակման գործընթացին: Ինտերնետի օգտատերերը պետք է առավել իրազեկ լինեն ինտերնետային հանցագործությունների դեմ պայքարող մասնագիտացված գործակալությունների գոյությանը, իսկ այդ գործակալությունները պետք է տեղեկատվություն տարածեն երեխաների նկատմամբ սպառնալիքների վերաբերյալ: Օգտատերերը պետք է կարողանան արագ հաղորդել այն ցնցող պատկերների կամ վարքի մասին, որոնց բախվում են ինտերնետում:

Ճանապարհորդության և զբոսաշրջության արդյունաբերությունը հատուկ ներառված է՝ թիրախի տակ առնելու ահազնացող

«սեքս տուրիզմի» երևույթը:⁸ Սա *à la carte* (առաջարկված ըստ ընտրության) մարմնավաճառությունն է, որն ինքնին պարզապես պոռնկագրության իրավիճակների տարբերակ է իրական կյանքում, որի պարագայում այդ երկու աշխարհները միանում են՝ մարդկային էակներին շահագործելու և նրանց մարմիններն արդյունաբերականացնելու նպատակով:⁹ Կանխարգելման լավ մոտեցում կարող է լինել ճանապարհորդներին տեղեկացնելը քրեական վարույթի ռիսկերի մասին, որոնց ենթակա են արտերկրում սեռական հանցագործություններ կատարողները՝ բրոշյուրների, տեսալսողական նյութերի և օդային փոխադրումներ իրականացնող ընկերությունների ինտերնետային կայքերում հայտարարությունների միջոցով: 1998 թվականին «Երեխաներին ճանապարհորդության և զբոսաշրջության ոլորտում սեռական շահագործումից պաշտպանելու վարքի կանոնագիրք» մշակվեց ECPAT Միջազգայինի (Վերջ մանկական մարմնավաճառությանը, պոռնկագրությանը և սեռական նպատակներով երեխաների թրաֆիկինգին) կողմից, որը կազմակերպությունների միջազգային ցանց է, որոնք միասնաբար աշխատում են մանկական մարմնավաճառության, մանկական պոռնկագրության և սեռական նպատակներով երեխաների թրաֆիկինգի վերացման ուղղությամբ՝ համագործակցելով Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպության հետ:

Ֆինանսական և բանկային ոլորտների ներառումը շատ կարևոր է, քանի որ ֆինանսական հաստատությունները հնարավորություն ունեն իրավապաշտպան գործակալությունների հետ համագործակցությամբ խանգարել ֆինանսական այն մեխանիզմների գործարկմանը, որոնք աջակցում են մանկատարփ կայքերի դիտման համար կատարվող վճարումներին, և նպաստել դրանց վերացմանը:

8. Ճանապարհորդություն առավել բարենպաստ իրավական դաշտ ունեցող կամ տնտեսապես առավել աղքատ երկրներ՝ տեղացիների հետ սեռական հարաբերություններ ունենալու նպատակով, սովորաբար, վարձատրման դիմաց:

9. Franck Michel, *Le Monde diplomatique*, August 2006.

Կոնվենցիան նաև խրախուսում է լրատվամիջոցներին տեղեկացնել հասարակությանը և բարձրացնել լայն հասարակության իրազեկության մակարդակը երեխաների սեռական շահագործման և սեռական չարաշահման խնդրի շուրջ: Լրատվամիջոցները հստակ կարևոր դերակատարում կարող են ունենալ լայն հասարակությանը կրթելու և նշված խնդրի դեմ իրատեսորեն պայքարելու առումով սեռական փոխհարաբերությունների, ծնողների դերի և սեռական առողջության վերաբերյալ փաստագրական և հեռուստատեսային ֆիլմերի միջոցով: Այս գործառույթը պետք է իրականացվի՝ պատշաճ կերպով պահպանելով առաջին հերթին լրատվամիջոցների անկախության և մամուլի ազատության սկզբունքները, իսկ երկրորդ հերթին՝ բոլոր տուժող երեխաների մասնավոր կյանքի գաղտնիության իրավունքը:

Ոլորտում ակտիվ այլ դերակատարների թվում են նաև ոչ կառավարական կազմակերպությունները (ՈԿԿ-ներ) և կամավորական հատվածը, որոնք սահմանվում են որպես «քաղաքացիական հասարակություն», ում աշխատանքը պետք է գնահատվի և ծառայի որպես հիմք: Պետություններին կոչ է արվում խրախուսել քաղաքացիական հասարակության կողմից իրականացվող այն նախագծերն ու ծրագրերը, որոնց նպատակն է կանխարգելել սեռական շահագործումն ու սեռական չարաշահումը և պաշտպանել երեխաներին այդ գործողություններից:

Կանխարգելման մասնագիտացված իրավասու մարմինները և համակարգող մարմինները

Կոնվենցիան պետություններին կոչ է անում ներգրավված տարբեր դերակատարների միջև արդյունավետ համակարգման հետ մեկտեղ ազգային և տեղական ծրագրերում կանխարգելման մասով բազմառարկայական մոտեցում ընդունել: Գործնականում դա կհանգեցնի հետևյալին՝

- ▶ կրթության, առողջապահության, սոցիալական ծառայությունների ոլորտների, ինչպես նաև իրավապահ և դատական մարմինների միջև համակարգում,

- ▶ անկախ կառույցների հիմնում՝ երեխաների իրավունքներին աջակցելու և դրանք պաշտպանելու, ինչպես նաև երեխաների վրա սոցիալական քաղաքականության ազդեցությունը գնահատելու նպատակով,
- ▶ անձի կամ մարմնի նշանակում, որի խնդիրը կլինի Բարձրացնել լայն հասարակության իրազեկության մակարդակը երեխաների սեռական շահագործման և սեռական չարաշահման վերաբերյալ:¹⁰ Մի շարք երկրներ ստեղծել են նման պաշտոններ, որոնք հայտնի են տարբեր անվանումներով՝ Երեխաների հարցերով օմբուդսմեն, Երեխաների հարցերով փաստաբան, Երեխաների իրավունքների հանձնակատար, Երեխաների իրավունքների կոմիտե և այլն: Նաև ակնհայտորեն կարևոր է, որպեսզի նման մարմին կամ պաշտոն ստեղծվելու դեպքում տրամադրվեն բավարար միջոցներ և հանձնարարվեն հստակ պարտականություններ,
- ▶ քաղաքացիական հասարակության հետ համագործակցությամբ տվյալների հավաքագրման մեխանիզմների ստեղծում երեխաների սեռական շահագործման և սեռական չարաշահման երևույթը դիտարկելու և գնահատելու, ինչպես նաև տեղեկատվության բացը շտկելու նպատակով՝ պատշաճ կերպով պահպանելով անձնական տվյալների պաշտպանության պահանջները,
- ▶ իրավասու պետական մարմինների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի միջև համագործակցության խթանում՝ երեխաների սեռական շահագործման և սեռական չարաշահման կանխարգելման և դրանց դեմ պայքարի ոլորտում:

Պաշտպանական միջոցները և տուժողներին աջակցելը

Թեև սեռական չարաշահման և սեռական շահագործման նկատմամբ պայքարի հիմնական նպատակը դրանց կանխարգելումն է,

10. Խորհրդարանական վեհաժողովն արդեն իսկ առաջարկել է, որպեսզի նշանակվի երեխաների հարցերով օմբուդսմեն (տես՝ Հանձնարարական 1460 (2000)):

կարևոր է նաև հոգ տանել, որ այդ հանցագործություններից տուժած երեխաները և ցանկացած անձ, ով սերտորեն կապված է նրանց հետ, ստանան հնարավորին լավագույն աջակցությունն ու օժանդակությունը:

Սեռական շահագործման կամ սեռական չարաշահման վերաբերյալ կասկածների մասին հաղորդելը

Առողջապահության ոլորտի մասնագետները երեխաների շահերի պաշտպանության հիմնական դերակատարներն են շնորհիվ երեխաների և նրանց ընտանիքների հետ կանոնավոր շփումների: Կարևոր է հասկանալ, որ նրանց դերը չպետք է սահմանափակվի այն ընտանեկան արատները շտկելով, որոնք թաքնված են խնդրի հիմքում, այլև պետք է ներառի կատարված բռնության մասին տազնապ բարձրացնելը և համապատասխան ծառայություններին նախագգուշացնելը: Չպարտադրելով դա՝ Կոնվենցիան բժիշկներին, հոգեբույժներին ու հոգեբաններին և երեխաների հետ կանոնավոր կամ պարբերաբար աշխատող այլ անձանց հնարավորություն է ընձեռում խախտել մասնագիտական գաղտնիության կանոնները, որպեսզի վերջինները կարողանան տեղեկացնել երեխաների սոցիալական պաշտպանության ծառայություններին այն դեպքերում, երբ իրենք բավարար հիմքեր ունեն կասկածելու, որ երեխան սեռական շահագործման կամ սեռական չարաշահման զոհ է: Ցանկացած այլ անձ, ով տեղյակ է կամ կասկածներ ունի, որ տեղի է ունեցել երեխաների սեռական շահագործում կամ սեռական չարաշահում, ցանկալի է հայտնի այդ փաստերն իրավասու ծառայություններին:

Թեժ գծերը և տուժողներին աջակցելը

Անհրաժեշտ է ձեռնարկել միջոցներ, որպեսզի մարդիկ կարողանան ապահով բացահայտել, որ իրենք տեղյակ են սեռական չարաշահման կամ շահագործման դեպքի մասին կամ տուժել են դրանից կամ պարզապես դրա մասին խոսել են իրենց սովորական միջավայրից դուրս որևէ այլ անձի հետ: Երեխայի խնամքի մասնագետներն ու քաղաքական որոշումներ կայացնողներն զնալով ավելի շատ

են կարծիք հայտնում, որ երեխաների համար նախատեսված թեժ գծերը կարևոր միջոց են երեխաներին աջակցություն ցուցաբերելու, նրանց փորձառությանը ծանոթանալու և համապատասխան ծառայություններից օգտվելու համար նրանց ուղղորդելու նկատառումով: Հեռախոսն առանձնահատուկ դեր ունի՝ երեխաներին հնարավորություն տալով արտահայտվել այն ժամանակ, երբ ցանկանում են՝ գաղտնի և առանց վախենալու առերես շփումից: Պետությունները պետք է խրախուսեն թեժ գծերի ստեղծումը՝ երեխաներին լսելու և խորհրդատվություն տրամադրելու նպատակով: Դրանք պետք է հնարավորինս մասշտաբ լինեն, և պետք է այնպիսի աշխատակիցներ ներգրավվեն, ովքեր համապատասխանող են երեխաների հետ աշխատելու համար:

Տուժողներին տրամադրվող պատշաճ աջակցությունը պետք է ներառի երկու ուղղություն. առաջինը՝ փաստերի բացահայտման հետևանքով ի հայտ եկած ճգնաժամի ամբողջ ընթացքում աջակցություն, և երկրորդ՝ սեռական բռնության հետևանքով ի հայտ եկած ֆիզիկական և հոգեբանական տրավմայի բուժում: Բացի այդ, հստակ անհրաժեշտություն կա տուժողներին պաշտպանել հետագա չարաշահումից:

Կոնվենցիայում թվարկվում են միջոցներ, որոնք կողմերը պետք է ձեռնարկեն տուժողների հետ կապված

- ▶ տուժողներին ցուցաբերել երկարաժամկետ և կարճաժամկետ աջակցություն՝ նրանց ֆիզիկական և հոգեբանական վերականգնման նպատակով: Կախված պատճառված վնասի լրջությունից՝ աջակցությունը պետք է տևի այնքան, որքան անհրաժեշտ կլինի երեխայի լիարժեք վերականգնումը երաշխավորելու համար: Խնամքը պետք է կենտրոնանա ֆիզիկական հետևանքների և հոգեբանական ազդեցությունների շուրջ ու խթանի երեխայի երկարաժամկետ առողջ զարգացումը: Կան սեռական բռնության հետևանքներին առնչվող խնդիրներ, որոնք շարունակվում են մինչև չափահաս դառնալը: Պետք է ձեռնարկել միջոցներ՝ հնարավորություն ընձեռելու մանուկ հասակում տուժած չափահասներին խոսել դրա մասին, եթե դա դեռ անհրաժեշտ է, և օգտվել համապատասխան օգնությունից,

- ▶ հեռացնել ենթադրյալ հանցագործին կամ հեռու պահել տուժողին իր ընտանեկան միջավայրից, եթե երեխայի ծնողները կամ խնամակալները ներգրավված են եղել նրա դեմ իրականացված գործողություններում: Շփումն անհապաղ դադարեցնելու որոշումը կարևոր է: Ներընտանեկան սեռական բռնության դեպքերում սովորաբար հեռացնում են երեխային, թեև գուցե առավել նպատակահարմար է թվում հանցագործին հեռացնելը, սակայն դա ենթադրում է, որ մյուս ծնողը պետք է հետևի և աջակցի երեխային,
- ▶ տրամադրել թերապևտիկ օգնություն տուժողի հետ սերտ կապի մեջ գտնվող անձանց, անհրաժեշտության կամ ցանկության դեպքում: Տուժողի հետ սերտ կապ ունեցող անձանց համար նույնպես օգտակար կլինի բուժում ստանալ իրենց անհանգստությունից և անգործության ու մեղքի զգացումներից ազատվելու համար,
- ▶ ստեղծել համագործակցություն՝ տուժողներին աջակցելու հարցում ներգրավված պետական մարմինների և ՈԿԿ-ների կամ այլ կազմակերպությունների միջև:

Միջամտության միջոցառումները

Միջամտության ծրագրեր կամ միջոցառումներ սեռական հանցագործների համար

Շատ թերապևտներ պնդում են, որ հասարակության մեջ և ընտանիքներում սեռական բռնության տարածվածությունը կարող է պայմանավորված լինել այն հանգամանքով, որ հանցագործներն իրենք են ենթարկվել սեռական բռնության մանուկ հասակում: Նրանց համար ողբերգաբար, իրենց մանկության փորձառությունների պատճառած տառապանքը հավանաբար երբեք չի արտահայտվել կամ դրան ոչ ոք ունկնդիր չի եղել: Այդ ցավալի փորձառությունը ներթափանցել է ենթագիտակցություն և այնուհետև դրսևորվել նմանօրինակ վարքագծով: Այլ թերապևտներ պնդում են, որ սերնդեսերունդ անցնող բռնության այդ շրջանը հաստատված փաստ չէ: Տուժած երեխաների բավական մեծ թիվ չի դառնում սեռական բռնություն գործադրող հանցագործ, և բազմաթիվ չափահաս

սեռական հանցագործներ սեռական չարաշահման գոհ չեն եղել: Թեև այդ գործողություններն ինքնին չպետք է որևէ կերպ հանդուրժվեն, հարկ է նաև ընդունել, որ նման վարք դրսևորող հանցագործները մարդիկ են, ում անհրաժեշտ է օգնել և բուժման կարիք ունեցող հիվանդ համարել: Քանի որ սեռական չարաշահման վերաբերյալ հանրային իրազեկության մակարդակն աճում է, և նկատի ունենալով առավել խիստ պատժի ժամանակակից միտումները, կարևոր է նաև առաջարկել բուժական ծրագրեր սեռական հանցագործների համար և նման ծրագրերին պատշաճ տեղ հատկացնել՝ երբեմն սուղ հանրային միջոցներ տրամադրելու և քաղաքական գերակայություններ սահմանելու միջոցով: Առանց դրա ներկա և ապագա գոհերի իրական պաշտպանությունն անհնար է:

Կոնվենցիայի՝ հավելյալ արժեք ունեցող ոլորտներից մեկն այն է, որ դրանով հնարավոր է դառնում մարդկանց երեք խմբի համար ցանկացած ժամանակ հոգեբանական, ինչպես նաև բժշկական և սոցիալական բաղադրիչներ ունեցող միջամտության միջոցառումների կամ ծրագրերի մատչելիությունը՝ հանցագործությունը կրկնելու ռիսկը նվազագույնի հասցնելու և ստեղծված վտանգը գնահատելու նպատակով: Շահառուների երեք խմբերն են՝

- ▶ սեռական հանցագործության համար քրեական վարությամբ ընդգրկված անձինք: Համաձայն անմեղության կանխավարկածի՝ խնդրո առարկա անձանց ընտրությունն է, մասնավորապես այս խմբում, ազատ որոշում կայացնել, թե արդյոք իրենք ցանկանում են օգտվել վերոնշյալ ծրագրերից կամ միջոցառումներից: Նրանք դա կարող են անել գործի քննության կամ դատավարության ընթացքում՝ պաշտպանություն ստանալու իրենց իրավունքների և արդար դատաքննության պահանջների ապահովման պայմաններում,
- ▶ սեռական հանցագործության համար դատապարտված անձինք: Այս խումբն ընդգրկում է այն անձանց, ովքեր ստացել են մեղքը հաստատող վերջնական դատավճիռ դատավորից կամ դատարանից,
- ▶ երեխաները, ովքեր ընդգրկված են սեռական բնույթի հանցագործություններում: 18 տարին չլրացած անձինք,

ովքեր դեռ չեն հատել քրեական պատասխանատվության ենթարկվելու համար սահմանված տարիքային շեմը, կարող են օգտվել ծրագրերից և միջոցառումներից, որոնք հարմարեցված են նրանց զարգացման կարիքների բավարարմանն ու նրանց սեռական վարքագծի հետ կապված խնդիրների լուծմանը:

Ծրագրերը և միջոցառումները չպետք է պարտադիր կերպով լինեն քրեական պատժիչ համակարգի մաս և կարող են փոխարենը ներառվել առողջապահական կամ սոցիալական ապահովության համակարգերում: Հոգեբանական միջամտությունը կարող է իրականացվել ճանաչողական վարքագծային բուժման կամ ոչ հոգեդինամիկ մոտեցմամբ բուժման միջոցով:¹¹ Բժշկական միջամտությունը հիմնականում ներառում է հակահորմոնային բուժում (բժշկական ամորձատում): Եվ վերջապես, սոցիալական միջամտությունը ներառում է հանցագործի սոցիալական վարքագիծը կարգավորելու և կանոնակարգելու միջոցառումներ (օրինակ՝ որոշակի վայրեր գնալու կամ որոշակի անձանց հանդիպելու արգելք), ինչպես նաև կառուցվածքներ, որոնք նպաստում են վերաինտեգրմանը (ինչպես օրինակ՝ աջակցություն վարչական խնդիրներում, աշխատանք փնտրելու հարցում):

Տեղեկատվությունը և համաձայնությունը

Նախքան միջամտության որևէ ձևի կիրառումը, խնդրո առարկա անձը, ում առաջարկվել են միջամտության ծրագրերը կամ

11. Հոգեբանության մեջ կա երկու հիմնարար մոտեցում: 1) ճանաչողական մոտեցումը հիմնված է մի կադապարի վրա, երբ իրավիճակի գնահատումն անհատի կողմից հանդիսանում է որոշիչ գործոն այն զգացմունքների և վարքի համար, որոնք իրենց հերթին ազդում են մտածողության գործընթացներին: Իրավիճակի գնահատումը հիմնված է անհատի խորն արմատացած համոզմունքներին իր և աշխարհի մասին: Հոգեթերապևստիկ աջակցությունը նպատակ ունի մշակել պատշաճ վարք՝ հոգեբանական վիճակներն առավել լավ վերահսկելու և խնդիրները լուծելու նկատառումով: 2) Հոգեդինամիկ մոտեցումն առավել շեշտադրում է ենթագիտակցության գործոնը: Առանձին խնդիրներն ընկալվում են որպես մանուկ հասակի չլուծված հակասությունների հետևանք: Դասական վերլուծական մեթոդը ենթադրում է անհատի ասածների և արածների մեկնաբանում չլուծված հակասությունները բացահայտելու նպատակով:

միջոցառումները, լիովին պետք է իրագրել լինի առաջարկի պատճառների մասին: Ներկայացված առաջարկների վերաբերյալ պետք է ձեռք բերվի նրա ազատ և տեղեկացված համաձայնությունը: Միջամտության հաջողությունը մեծապես կախված է դրա նկատմամբ շահառուի անկեղծ տրամադրվածությունից: Առաջարկները կարող են ընդունվել կամ մերժվել: Անձը պետք է տեղեկացվի հետևանքների մասին (օրինակ՝ պատիժը կասեցնող կամ թեթևացնող միջոցառումից հրաժարվելը):

Հաճախ վկայակոչելով կողմերի ներպետական իրավունքը՝ Կոնվենցիան սահմանափակվում է մի շարք հիմնարար սկզբունքներ ամրագրելով՝ առանց հնարավոր միջոցառումները և ծրագրերը մանրամասնելու: Այնուհանդերձ, կողմերի պարտականությունն է կանոնավոր կերպով գնահատել ծրագրերի և միջոցառումների արդյունավետությունն ու արդյունքները՝ դրանց գիտական օգտակարությունը գնահատելու նպատակով: Բացի այդ, արդյունքները կախված են թե՛ թերապևտների վերապատրաստումից և վերահսկումից և թե՛ բարենպաստ ինստիտուցիոնալ շրջանակից: Տեքստում շեշտվում է ներգրավված տարբեր ծառայությունների համակարգման անհրաժեշտության մասին, մասնավորապես՝ առողջապահական ծառայությունների, սոցիալական ծառայությունների, պատժիչ հաստատությունների և, պատշաճ հարգանք դրսևորելով նրանց անկախության նկատմամբ, դատական մարմինների միջև:

Փաստերի քրեականացումը

Նյութական քրեական իրավունք

Վավերացնելով Կոնվենցիան պետություններն իրավաբանորեն պարտավորվում են այն կիրառել, և դա իր հերթին հանգեցնում է ներպետական քրեական օրենքների ներդաշնակեցմանը: Ներդաշնակեցումը նպաստում է երեխաների նկատմամբ սեռական շահագործման և սեռական չարաշահման դեմ գործողություններին մի շարք կարևոր պատճառներով: Առաջինը, Կոնվենցիան քրեականացնում է մի շարք գործողություններ, իսկ սահմանումների

և օրենսդրության ներդաշնակեցումն անհնար է դարձնում մի շարք մարդկանց համար մեկնել որևէ կողմ պետություն, որն ունի ավելի մեղմ իրավական համակարգ, և անօրինական գործողություններ իրականացնել այնտեղ: Երկրորդը, ընդհանուր սահմանումները նաև կարող են նպաստել հետազոտություններին և խթանել տվյալների համեմատականությունը՝ դրանով իսկ առավել դյուրին դարձնելով երեխաների նկատմամբ սեռական բնույթի հանցագործությունների իրական պատկեր ստանալը: Երրորդը, խթանվում է միջազգային համագործակցությունը, քանի որ երեխաների նկատմամբ սեռական բռնության դեմ պայքարի ջանքերը (կանխարգելում, պաշտպանություն, ընթացակարգեր) հիմնվում են միասնական օրենսդրության վրա:

Նկատի առնելով ներպետական օրենսդրության և նախադեպային իրավունքի տարբերություններն այս կետի առնչությամբ՝ Կոնվենցիան չի նախատեսում տուժողի տարիքի մասին ենթադրյալ հանցագործների իրազեկ կամ անտեղյակ լինելու մասին դրույթներ: Բացի այդ, որոշակի հանգամանքներում, երբ անչափահասները հանցագործություն են կատարում (ինչպես օրինակ՝ մանկական պոռնկագրական նյութերի տարածում), տեքստում հնարավորություն է ընձեռվում կիրառել առավել նպատակահարմար միջոցներ, քան քրեական հետապնդումն է, որը պետք է լինի վերջինս ատյանը:

Սեռական չարաշահումը

Առաջին անգամ միջազգային պայմանագրում երեխայի նկատմամբ սեռական չարաշահման հանցագործությունը սահմանվում է որպես հետևյալ երկու տեսակի կանխամտածված արարքներ՝

- ▶ այն երեխայի հետ սեռական հարաբերությունների մեջ ներգրավվելը, ով չի հասել սեռական հարաբերությունների համար օրենքով սահմանված տարիքին,
- ▶ անկախ տարիքից երեխայի հետ սեռական հարաբերությունների մեջ ներգրավվելը, եթե
 - գործադրվել է պարտադրանք, ուժ կամ սպառնալիք, կամ

- ունեցություն է կատարվել՝ երեխայի նկատմամբ վստահության, իշխանության կամ ներազդեցության ճանաչված դիրքի օգտագործմամբ՝ ներառյալ ընտանիքում, կամ
- ունեցություն է կատարվել՝ օգտվելով երեխայի խոցելի իրավիճակից, հատկապես մտավոր կամ ֆիզիկական արատների կամ կախյալ վիճակից:

Մինչդեռ չարաշահման առաջին տեսակը վերաբերում է երեխաներին, ովքեր չեն հասել սեռական հարաբերությունների համար օրենքով սահմանված տարիքին, և նման հարաբերությունները հետևաբար առավել ևս բնութագրվում են որպես ապօրինի, ապա երկրորդ տեսակը վերաբերում է այն երեխաներին, ովքեր հասել են նշված տարիքին, սակայն դեռ անչափահաս են (18 տարին չլրացած), ուստի կարող է ի հայտ գալ երեխայի կողմից սեռական հարաբերություններ ունենալու համաձայնության խնդիրը: Պարզ է, որ եթե կիրառվել է պարտադրանք, ուժ կամ սպառնալիք, ապա ենթադրաբար երեխայի համաձայնությունը չի եղել: Այն երեխաների նկատմամբ չարաշահման դեպքում, ովքեր հատուկ խոցելի իրավիճակում են՝ ֆիզիկական կամ զգայական խանգարումների և մտավոր կամ հոգեկան հաշմանդամության պատճառով, սեռական հարաբերություն ունենալու համաձայնությունը կորցնում է իր վավերականությունը՝ նրանց «կախյալ վիճակի» պատճառով: Այս հասկացությունը մատնանշում է ֆիզիկական, հոգեբանական, հուզական, ընտանեկան, սոցիալական կամ տնտեսական կախվածության, այդ թվում նաև թմրամիջոցներից կամ ալկոհոլից կախվածության կամ հանցագործության կատարման ընթացքում դրանց ազդեցության տակ գտնվելու իրավիճակներ: Երրորդ դեպքը վերաբերում է այնպիսի չարաշահումներին, երբ առկա են վստահության փոխհարաբերություններ երեխաների հետ, կամ բնական, սոցիալական կամ կրոնական հեղինակության դիրքի գործոնը հնարավորություն է տալիս հանցագործին վերահսկել, պատժել և պարզևատրել երեխաներին՝ նրանց հետ սեռական հարաբերություններ ունենալու նպատակով: Վստահության վրա հիմնված նման հարաբերությունները գոյություն ունեն բնական և որդեգրող ընտանիքներում, այն անձանց հետ,

ովքեր պատասխանատու են կամ ապահովում են երեխաների կրթությունը, անձինք, ովքեր տրամադրում են թերապևտիկ կամ բժշկական օգնություն, և անձինք, ովքեր աշխատում են երեխաների հետ կամավոր հիմունքներով:

Կոնվենցիան չի սահմանում «սեռական գործունեություն» հասկացությունն ու չի նախատեսում իրավական նվազագույն տարիք սեռական հարաբերություններ ունենալու համար: Այն սահմանումը թողնում է կողմերից յուրաքանչյուրին՝ նկատի ունենալով ներպետական օրենսդրական տարբերությունները: Այն չի փորձում քրեականացնել սեռական հարաբերությունները համաձայնություն տված չափահասների միջև, ովքեր հայտնաբերում են իրենց սեռականությունը, նույնիսկ եթե նրանցից մեկը կամ երկուսն էլ չեն լրացրել սեռական հարաբերությունների՝ օրենքով սահմանված տարիքը: Դրա նպատակը չէ անչափահասների միջև փոխադարձ համաձայնությամբ սեռական հարաբերությունների կարգավորումը՝ նրանց սեռական զարգացման համատեքստում:

*Երեխայի մարմնավաճառության հետ կապված
հանցագործությունները*

Կոնվենցիայի համաձայն՝ երեխայի մարմնավաճառություն նշանակում է երեխայի օգտագործումը սեռական բնույթի գործունեության մեջ վարձատրության կամ ցանկացած այլ տեսակի հատուցման դիմաց՝ անկախ նրանից, թե այդ հատուցումը կատարվում է երեխային, թե երրորդ անձին: Քրեականացվում են հետևյալ կանխամտածված արարքները՝

- ▶ երեխային մարմնավաճառության մեջ ներգրավելը կամ երեխային մարմնավաճառության դրդելը,
- ▶ երեխային մարմնավաճառության հարկադրելը կամ դրանից շահույթ ստանալը կամ նման նպատակներով երեխային այլ կերպ շահագործելը,
- ▶ երեխաների մարմնավաճառությանն օժանդակելը:

Հանցագործություն կատարելու իրավական պահանջները բավարարված են համարվում, նույնիսկ եթե երեխայի

օգտագործումը մարմնավաճառության մեջ կանոնավոր չէ և նույնիսկ եթե վարձատրությունը պարզապես խոստացվել է: Քրեական պատիժներ են կիրառվում թե՛ նրանց նկատմամբ, ովքեր ներգրավել են երեխային և թե՛ նրանց նկատմամբ, ովքեր շահույթ են ստանում նրանցից:

Մալթա

Մալթան, իր քրեական օրենսգրքի հատուկ հոդվածի համաձայն, մեղադրանք է հարուցում, երբ անչափահաս անձը մարմնավաճառությամբ է զբաղվում (չնայած որ մի շարք այլ երկրներում այդ հանցագործությունը կարգավորվում է անչափահասների սեռական չարաշահման վերաբերյալ հոդվածներով):

Մանկական պոռնկագրության հետ կապված հանցագործությունները

Ո գ ե շ ն չ վ ա ծ լ ի ն ե լ ո վ Ե վ ը ո պ ա յ ի խ ո թ ի ղ ի Կիբեռհանցագործությունների կոնվենցիայով՝ սույն Կոնվենցիան փորձում է ամրապնդել բոլոր երեխաների պաշտպանությունը (այդպիսով և բոլոր անչափահասների)՝ կապված համակարգչային համակարգերի կամ որևէ այլ հաղորդակցական և տեղեկատվական տեխնոլոգիայի օգտագործման հետ, որոնք կարող են նպաստել երեխաների սեռական չարաշահմանն ու շահագործմանը:

Ոգեշնչված լինելով Երեխայի իրավունքների մասին Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիայի կամընտիր արձանագրությամբ սույն Կոնվենցիան սահմանում է «մանկական պոռնկագրություն» հասկացությունը՝ որպես բացահայտ սեռական գործունեության մեջ իրապես կամ ձևականորեն ներգրավված երեխայի ցանկացած տեսողական արտապատկերում, կամ երեխայի սեռական օրգանների որևէ ներկայացում՝ բացառապես սեռական նպատակներով: Հետևաբար այն նյութերը, որոնք ունեն արվեստաբանական, բժշկական, գիտական կամ նմանօրինակ նշանակություն, այսինքն, երբ սեռական նպատակները բացակայում են, չեն դասվում այդ սահմանմանը:

Կոնվենցիան քրեականացնում է հետևյալ կանխամտածված արարքները՝

- ▶ մանկական պոռնկագրություն արտադրելը, առաջարկելը, մատչելի դարձնելը, տարածելը, փոխանցելը կամ տնօրինելը,
- ▶ սեփական նպատակներով կամ այլ անձի համար մանկական պոռնկագրություն ձեռք բերելը,
- ▶ տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների միջոցով գիտակցաբար մանկական պոռնկագրության հասանելիության հնարավորություն ձեռք բերելը:

Նման վարքը, օրինակ, ներառում է ցանկացած տեսքով (ամսագրեր, տեսաժապավեններ, տեսասկավառակներ, բջջային հեռախոսներ, USB կրիչներ, ձայնասկավառակներ) պատկերների կամ ֆիլմերի առցանց տեղադրում, տարածում, գործարկում, ներբեռնում կամ գնում: Կոնվենցիայի նորարարական առանձնահատկությունն է պետություններին պարտավորեցնելը՝ քրեորեն հետապնդել նրանց, ովքեր մանկական պոռնկագրական կայքերում միտումնավոր դիտում են երեխաների նկարներ՝ առանց դրանք ներբեռնելու և պահելու: Հանցագործության միտումնավոր բնույթը բխում է այն փաստից, որ նյութի գնումը պարբերական բնույթ է կրում կամ այն դիտելու համար վճարվել է:

Կոնվենցիան նախատեսում է վերապահման հնարավորություն երկու դեպքում՝

- ▶ մոդելավորված կամ իրականում գոյություն չունեցող երեխայի իրական պատկերների արտադրություն կամ տնօրինում,
- ▶ սեռական հարաբերությունների համար օրենքով սահմանված տարիքին հասած երեխաների պատկերների արտադրություն և տնօրինում, երբ այդ պատկերներն արտադրվել և տնօրինվում են նրանց կողմից, իրենց համաձայնությամբ և միայն իրենց անձնական օգտագործման համար:

Յուրաքանչյուր կողմ կարող է նաև իրավունք վերապահել ամբողջությամբ կամ մասամբ չկիրառելու պոռնկագրական նյութերին տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների միջոցով հասանելիության վերաբերյալ պարբերությունը:

Պոռնկագրական բնույթի գործողություններում երեխաների մասնակցության հետ կապված հանցագործությունները

Կոնվենցիան քրեականացնում է որոշակի գործողություններ, որոնք կապված են կենդանի պոռնկագրական ներկայացումների կազմակերպման հետ, որոնցում ներգրավված են երեխաները բացահայտ սեռական վարքով, և մասնավորապես՝

- ▶ պոռնկագրական ներկայացումներում երեխաներին ներգրավելը կամ երեխաներին նման ներկայացումների դրդելը,
- ▶ երեխաներին պոռնկագրական ներկայացումների հարկադրելը կամ դրանից շահույթ ստանալը կամ նման նպատակներով երեխային այլ կերպ շահագործելը,
- ▶ երեխաների մասնակցությամբ պոռնկագրական ներկայացումները գիտակցաբար հաճախելը:

Երեխաների սեռական այլասերումը

Երեխաների այլասերումը սահմանվում է որպես օրենքով սահմանված տարիքին չհասած երեխային այլ երեխաների կամ չափահասների սեռական գործողություններին ակնառես լինելուն դրդելը: Պարտադիր չէ, որ երեխան որևէ ձևով մասնակցի սեռական գործողություններին: Այդպիսի գործողությունների դրսևորումը երեխաների ներկայությամբ արդեն բավարար է, որպեսզի համարվի, որ տվյալ անձն այլասերում է երեխաներին:

Երեխաներին սեռական բնույթի գործողություններին դրդելը

Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների միջոցով երեխայի հետ հանդիպելու նպատակով կատարված առաջարկը սեռական մղումներ առաջացնելու («գրումինգ») նկատառումով, Լանցարտեի կոնվենցիայի մեծ նորամուծությունն է, քանի որ ներկայումս որևէ այլ միջազգային փաստաթղթում չի նշվում այս երևույթի մասին: Այնուհանդերձ, այս երևույթն ավելի ու ավելի մեծ տարածում է ստանում ինտերնետում, որի միջոցով չափահասները վստահության հարաբերություններ են ստեղծում երեխաների հետ՝

նրանց հետագայում հանդիպելու և նրանց սեռական չարաշահման ենթարկելու կամ մանկական պոռնկագրական նյութեր ստեղծելու նպատակով:

Կարևոր է նշել, որ երեխայի հետ սեռական բնույթի հաղորդագրություններով փոխանակվելն ինքնին բավարար չէ քրեական պատասխանատվության ենթարկելու համար: Նման արարքի հեղինակին «գրումինգ» (սեռական նպատակներով երեխաներին գայթակղման) հասկացության հիմքով քրեական պատասխանատվության ենթարկելու համար շփումներին պետք է հետևի երեխայի հետ հանդիպելու առաջարկ՝ նպատակ ունենալով նրան չարաշահման ենթարկել կամ պոռնկագրական նյութեր արտադրել, իսկ երեխայի տարիքը պետք է լինի սեռական հարաբերությունների համար օրենքով սահմանված տարիքից ցածր: Հանցանքը լիովին ճանաչվում է միայն այն դեպքում, երբ հանդիպելու առաջարկին «հետևել են նման հանդիպմանը հանգեցնող ֆիզիկական գործողություններ», նույնիսկ եթե իրական չարաշահում տեղի չի ունեցել: Սա ենթադրում է կոնկրետ գործողություններ, օրինակ՝ հանցագործի գնալը դեպի հանդիպման վայր: Հանցագործության բոլոր ասպեկտները նաև պետք է կանխամտածված լինեն: Անշուշտ, այս ամենը չի նշանակում, որ Լանցարտեի կոնվենցիան համարում է երեխաների հետ «զուտ» սեռական բնույթի հաղորդագրությունների փոխանակումն ընդունելի վարքագիծ: Այս տեսակի վարքագծին անդրադառնում են Կոնվենցիայի այլ (ինչպես օրինակ՝ սեռական չարաշահման, մանկական պոռնկագրության կամ երեխաների այլաօգտագործման) դրույթներ, ուստի նրանք, ովքեր կատարում են այն, հետապնդվում են անհրաժեշտության դեպքում և պատժվում քրեորեն կամ այլ պատժամիջոցներով՝ ելնելով փաստերի լրջությունից:

Աջակցությունը կամ հանցակցությունը և հանցանք կատարելու փորձը

Ըստ Կոնվենցիայի՝ քրեական պատասխանատվությունը կիրառվում է նաև այն դեպքերում, երբ տեղի են ունենում՝

- ▶ կանխամտածված աջակցություն և հանցակցություն, երբ անձը, ով իրականացնում է սույն Կոնվենցիայով սահմանված

հանցագործություններից մեկը, աջակցություն է ստանում հանցագործության մտադրությամբ այլ անձից,

- ▶ սույն Կոնվենցիայով սահմանված հանցագործություններից որևէ մեկը կանխամտածված կերպով կատարելու փորձեր:

Երկրորդ տարբերակում հնարավոր է վերապահում կատարել և չքրեականացնել հետևյալ հանցագործություններ կատարելու փորձը՝ մանկական պոռնկագրություն առաջարկելը կամ տրամադրելը, անձնական նպատակով կամ մեկ այլ անձի համար մանկական պոռնկագրական նյութեր ձեռք բերելը, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների միջոցով մանկական պոռնկագրական նյութերի հասանելիությունը կանխամտածված ապահովելը, երեխաների մասնակցությամբ պոռնկագրական ներկայացումները կանխամտածված հաճախելը և սեռական նպատակներով երեխաներին այլասերելն ու գայթակղելը:

Այս շեղումը նախատեսվել է Կոնվենցիայով՝ դատական համակարգերի բազմազանությունը հաշվի առնելու նպատակով, որոնցից մի քանիսը սահմանափակում են այն հանցագործությունները, որոնց կատարման փորձերը պատժելի են:

Վարույթ հարուցելու և հանցագործության համար պատժելու ընդդատական պահանջները

Կոնվենցիայում նշված են մի շարք պահանջներ, որոնցով կողմերը պետք է սահմանեն իրավագործություն և պատժեն սեռական բնույթի քրեական հանցագործությունների համար՝

- ▶ տարածքային սկզբունք՝ յուրաքանչյուր կողմից պահանջվում է պատժել այն հանցագործությունների համար, որոնք կատարվել են իր տարածքում կամ իր դրոշը կրող նավի վրա կամ իր օրենքների ներքո գրանցված օդանավի վրա,
- ▶ քաղաքացիության սկզբունք՝ յուրաքանչյուր կողմից պահանջվում է պատժել իր քաղաքացիների կողմից արտերկրում կատարված հանցագործությունների համար:

Այս տեսակի ընդդատությունը հատկապես կարևոր է «սեքս տուրիզմի» դեմ պայքարի համատեքստում,

- ▶ հանցագործին կամ տուժողին այն պետության հետ կապելու սկզբունքը, որտեղ խնդրո առարկա անձը սովորաբար բնակվում է: Յուրաքանչյուր կողմ պետք է սահմանի ընդդատություն՝ պարզելու այն գործողությունները, որոնք իրականացվել են կամ որոնցից տուժել են իր տարածքում: Սակայն այս կանոնը կամընտիր է և կարող է ենթակա լինել վերապահումների,
- ▶ երկակի քրեականության կանոնից հրաժարումը: Արտերկրում կատարված իրավախախտումների դեպքում Կոնվենցիան նախատեսում է այս կանոնից հրաժարում, նույնիսկ եթե գործողությունները հանցագործություն չեն համարվում այն վայրում, որտեղ դրանք իրականացվել են: Թեև սա հանդիսանում է Կոնվենցիայի հավելյալ արժեքի կարևոր տարր, դրանից հրաժարումը խստորեն սահմանափակվում է «սեքս տուրիզմի» հանցագործություններով և արտերկրում սահմանափակ ժամկետով աշխատող անձանց դեպքերով (մարդասիրական կամ ռազմական աշխատանքներ կամ այլ ժամանակավոր առաքելություններ),
- ▶ տուժողի կողմից բողոքի ներկայացման պահանջից հրաժարում կամ այն պետության իշխանությունների կողմից չեղյալ հայտարարում, որտեղ տեղի են ունեցել լուրջ հանցագործություններ՝ սեռական չարաշահում, մանկական մարմնավաճառություն, մանկական պոռնկագրության արտադրություն և մանկական պոռնկագրական ներկայացումներին մասնակցություն:

Որոշակի դեպքերում հնարավոր է, որ մի քանի կողմ ընդդատություն ունենան որևէ անձի կամ բոլոր անձանց նկատմամբ, ովքեր մասնակցել են տվյալ հանցագործության կատարմանը: Ընթացակարգերի կրկնօրինակումից խուսափելու նպատակով խնդրո առարկա կողմերը պետք է միմյանց հետ խորհրդակցեն (անհրաժեշտության դեպքում)՝ որոշելու քրեական հետապնդման պատշաճ վայրը:

Համապարտ պատասխանատվությունը

Կոնվենցիան պարտավորեցնում է կողմերին իրենց ներպետական իրավունքում ներմուծել երեխաների նկատմամբ սեռական բնույթի հանցագործություններ կատարելու համար համապարտ պատասխանատվություն, որոնք կատարվել են որևէ անձի կողմից, ով զբաղեցնում է ղեկավար պաշտոն որևէ հաստատությունում կամ երբ ղեկավարության կողմից իր աշխատողի հանդեպ վերահսկողության կամ հսկողության բացակայությունը հանգեցրել է հանցագործության կատարմանը: Ղեկավար պաշտոն զբաղեցնող անձը պետք է գործեր իր լիազորություններից մեկի կամ մի քանիսի շրջանակներում (հաստատությունը ներկայացնելու, որոշումներ կայացնելու, վերահսկողություն իրականացնելու լիազորություն): Պետությունների տարբեր իրավական ավանդույթներն այս ոլորտում հաշվի առնելու նպատակով՝ նախատեսված է, որ այս պատասխանատվությունը չպետք է անպայմանորեն լինի քրեական, այլ կարող է լինել քաղաքացիական կամ վարչական: Ավելին, համապարտ պատասխանատվությունը չի բացառում անհատական պատասխանատվությունը: Կարող է լինել պատասխանատվություն մի քանի մակարդակներում միաժամանակ: Այս խնդրին առնչվող կարևոր փաստաթուղթ է կրկին Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի վերջին հաստատություններում երեխաների նկատմամբ սեռական չարաշահման մասին թիվ 1934 (2010) հանձնարարականը՝ որը երաշխավորում է տուժողների լիիրավ պաշտպանությունը, ներառում է օրենսդիր, վարչական և քաղաքական գործողությունների մի շարք առաջարկություններ, որոնք կարող են ընդունվել անդամ պետությունների կողմից:

Պատժամիջոցները և ծանրացնող հանգամանքները

Կոնվենցիան պարտավորեցնում է կողմերին ներմուծել «արդյունավետ, համաչափ և տարհամոզիչ պատժամիջոցներ»: Եթե հանցագործությունը կատարել են անհատներ, ապա նշված պատժամիջոցները կարող են հանգեցնել ազատազրկման և նույնիսկ հանձնման: Իրավաբանական անձանց համար պատժամիջոցները կարող են լինել դրամական: Պատասխանատուների նկատմամբ

կարող է կիրառվել փաստաթղթերի, իրերի և հանցագործության կատարման նպատակով օգտագործված այլ միջոցների առգրավման, ինչպես նաև այնպիսի պատժամիջոցների, ինչպիսիք են հանցագործությունը կատարելու նպատակով օգտագործվող ցանկացած հաստատության փակումը, երեխաների հետ շփում ենթադրող գործունեության արգելումը կամ դատական վերահսկողությունը:

Կոնվենցիան նախատեսում է առավել խիստ դատապարտում որոշակի հանգամանքներում, օրինակ՝ երբ հանցագործությունը լրջորեն վնասել է տուժողի ֆիզիկական կամ հոգեկան առողջությունը, երբ տեղի են ունեցել խոշտանգման գործողություններ կամ ծանր բռնություններ, երբ տուժողը և հանցագործը մինևս սերտ շրջանից են, երբ հանցագործությունը կատարվել է մի շարք անձանց կողմից, ովքեր գործել են միասին կամ քրեական կազմակերպության շրջանակներում և երբ հանցագործը նախկինում դատապարտված է եղել նմանօրինակ հանցագործություն կատարելու համար:

Նախկինում դատապարտված լինելը

Երեխաների նկատմամբ սեռական շահագործումը կամ սեռական չարաշահումը երբեմն կազմակերպվում է անդրազգային մակարդակում՝ քրեական կազմակերպությունների կամ անհատների կողմից, ովքեր դատվել և դատապարտվել են մի շարք երկրներում: Ներպետական մակարդակում շատ իրավական համակարգեր նախատեսում են այլ, առավել խիստ պատիժ, եթե անձը նախկինում դատապարտված է եղել: Կոնվենցիան հաստատում է այս հնարավորությունը, սակայն դատարանների վրա չի դնում որևէ պարտականություն՝ համոզվելու, թե արդյոք հետապնդվող անձինք վերջնական դատավճիռ ստացել են այլ կողմի դատարաններից: Այնուհանդերձ անհրաժեշտ է նշել, որ համաձայն Քրեական գործերով փոխադարձ օգնության եվրոպական կոնվենցիայի (ETS թիվ 30) 13-րդ հոդվածի, մի կողմի դատական մարմինները կարող են քրեական գործի համար անհրաժեշտության դեպքում մեկ այլ կողմից խնդրել համապատասխան դատական արձանագրություններից քաղվածքներ և դրանց վերաբերյալ տեղեկատվություն:

Ընթացակարգերը

Նախնական քննությունը, քրեական հետապնդումը և դատավարական իրավունքը

Գոյություն ունեցող միջազգային իրավական փաստաթղթերը միայն անդրադառնում են հատուկ դատական ընթացակարգի ընդունման անհրաժեշտությանը, որը հարմարեցված է տուժող երեխաներին: Ներպետական օրենսդրության բնագավառում կատարված վերջին վերլուծություններից ի հայտ են գալիս մի շարք անհամաչափություններ այս ոլորտում: Հետևաբար Կոնվենցիայի ներդրումն է երաշխավորել, որ երեխաների նկատմամբ սեռական շահագործման կամ սեռական չարաշահման գործողություններին վերաբերող նախնական քննության և դատավարության ընթացքում կողմերը հաշվի առնեն երեխաների լավագույն շահերը, իրավունքներն ու խոցելիությունը՝ նրանց կրած տրավմայի խորացումից խուսափելու համար, որի պատճառով նրանք արդեն տառապել են: Ձեռնարկված միջոցները, անշուշտ, պետք է չլինեն կանխակալ՝ հանցագործի իրավունքների նկատմամբ (պաշտպանության և արդար դատավարության իրավունք), ինչպես նախատեսում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան:

Համապատասխան ընթացակարգերը պետք է դիտվեն որպես գերակայություն և իրականացվեն առանց չհիմնավորված ուշացումների, մասնավորապես, երբ ենթադրյալ հանցագործին կամ տուժողին իր ընտանիքից հեռացնելու միջոցներ են ձեռնարկվել: Նախնական քննությունը պետք է հնարավորինս աննկատ լինեն, եթե դա թույլ են տալիս քննվող հանցագործությունների բնույթն ու լրջությունը:

Պաշտպանության ընդհանուր միջոցները

Կոնվենցիան ընթացակարգային պարտավորություններ է սահմանում կողմերի համար՝ ապահովելու երեխաների պաշտպանությունը դատավարության բոլոր փուլերում՝ նախնական քննությունից մինչև դատավճիռ կայացնելը, այն է՝

- ▶ տեղեկացնել երեխաներին, նրանց ընտանիքներին կամ օրինական ներկայացուցիչներին՝ դատավարության ընթացքի

և նրանց մատչելի ծառայությունների և հետապնդվողի կամ դատապարտվածի հնարավոր ազատ արձակման մասին,

- ▶ երաշխավորել երեխաների, ինչպես նաև նրանց ընտանիքների ու նրանց անունից հանդես եկող վկաների անվտանգությունն ահաբեկումից, հաշվեհարդարից, կրկին հանցագործության գոհ դառնալուց կամ հանցագործությունը կատարած ենթադրյալ հանցագործի հետ այլ ուղղակի առերեսումից, եթե միայն դա անհրաժեշտ կամ օգտակար չէ վարույթի համար,
- ▶ ընձեռել իրենց լսելու, ապացույցներ ներկայացնելու և անձնական կյանքի անձեռնմխելիությունը պաշտպանելու հնարավորություն, մասնավորապես՝ ինքնության և հեղինակության պաշտպանություն,
- ▶ քրեական վարույթ հարուցել՝ առանց տուժողին ստիպելու բողոք ներկայացնել, և վարույթը շարունակել, եթե տուժողը որևէ պատճառով հրաժարվում է իր բողոքից:

Սեռական շահագործման և սեռական չարաշահման գործողություններից տուժած երեխաներին նաև երաշխավորվում են մի շարք իրավունքներ՝

- ▶ դատական և վարչական վարույթների մասին տեղեկություններ ստանալու իրավունքը (որոշ պետություններում փոխհատուցման ընթացակարգերը վարչական իրավունքի առարկա են),
- ▶ տուժողների անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը՝ երաշխավորված լինելու դեպքում: Անվճար իրավաբանական օգնության մատչելիությունն ինքնաբերաբար չի նախատեսվում, թեև կողմերը պետք է մտապահեն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը, որի համաձայն՝ դատարանի արդյունավետ մատչելիությունը կարող է ի հայտ բերել իրավաբանի անվճար օգնության անհրաժեշտություն: Անհրաժեշտ է պարզել, թե արդյո՞ք արդյունավետ կլինի, եթե խնդրո առարկա անձը հայտնվի դատարանում առանց փաստաբանի օգնության, այսինքն՝ արդյո՞ք նա կարող է իր գործը պատշաճ և բավարար կերպով հիմնավորել (Airey-ն ընդդեմ Իռլանդիայի վճիռը,

9-ը հոկտեմբերի, 1979թ.): Այսպիսով, դատարանին է վերապահվում գնահատել, թե արդյոք կարիքավոր կողմը, ով չի կարող հոգալ փաստաբանական ծախսերը, ի շահ արդարադատության պետք է իրավաբանական օգնություն ստանա,

- դատական վարչություն ներկայացված լինելու իրավունքը հատուկ ներկայացուցչի կողմից, երբ ծնողական պատասխանատվություն կրողները կամ երեխային պաշտպանելու պատասխանատվություն ունեցողները որևէ ձևով ներգրավված են վարչություն կամ առկա է անկողմնակալության պակաս, երբ խոսքը վերաբերում է երեխայի իրավունքների պաշտպանությանը:

Վաղեմության ժամկետը

Հաճախ այնպես է պատահում, որ սեռական շահագործման կամ սեռական չարաշահման գոհերից շատ ժամանակ է պահանջվում իրենց փորձառության մասին պատմելու համար, քանի որ ահաբեկված երեխաները լուր են մնում: Այդ պատճառով անհրաժեշտ է տուժողներին տրամադրել բավարար ժամանակ՝ հասունության և անկախության որոշակի մակարդակի հասնելու համար՝ նախքան նրանք ստիպված կլինեն հաղորդել նշված գործողությունների մասին: Հենց այս հնարավորությունն է նախատեսում Կոնվենցիան կողմերին խնդրելով նախքան վարույթ սկսելը բավարար ժամանակ հատկացնել տուժողներին՝ մինչև նրանց չափահասության տարիքին հասնելը: Այս հնարավորությունը վերաբերում է հատկապես ծանր հանցագործություններին (սեռական չարաշահում, մանկական մարմնավաճառության մեջ ներգրավում ու պարտադրում և պոռնկագրական ներկայացումներում երեխաների մասնակցություն): Օրինակ՝ Անգլիայի օրենքում չկա վաղեմության ժամկետ, ֆրանսիական օրենքն ունի քսան տարվա վաղեմության ժամկետ՝ չափահասության տարիքից հաշված, Իտալիայի և Պորտուգալիայի օրենքում տուժողի տարիքի հետ կապված կանոններ չկան:

Քննությունը և երեխայի հետ հարցազրույցները

Կոնվենցիան պահանջում է, որ քննություններն իրականացնեն երեխաների սեռական շահագործման և սեռական չարաշահման պայքարի դեմ ոլորտի մասնագետները: Երեխաների հայտարարությունները նույնպես պետք է հաշվի առնվեն այն անձանց կողմից, ովքեր հատուկ վերապատրաստում են անցել մանկական հոգեբանության ոլորտում, որպեսզի նրանք կարողանան համապատասխանեցնել հարցազրույցները երեխաների կարիքներին, նրանց մոտ ստեղծել վստահություն և խրախուսել նրանց ազատ խոսել: Դատական վարությամբ ներգրավվածները (մասնավորապես՝ դատավորները, դատախազներն ու փաստաբանները) պետք է, ցանկության դեպքում և պատշաճ կերպով պահպանելով իրենց անկախությունը, հնարավորություն ունենան վերապատրաստվել երեխաների իրավունքների և երեխաների սեռական շահագործման ու սեռական չարաշահման ոլորտում:

Հարցազրույցները պետք է տեղի ունենան անմիջապես գործողությունների մասին հաղորդում ստանալուց հետո, հարմարեցված և անվտանգ միջավայրում, հնարավորության դեպքում նույն անձանց կողմից և մի երրորդ կողմի ներկայությամբ, ով ուղեկցում է երեխային, եթե հիմնավորված որոշում չի կայացվել հակառակի մասին: Հարցազրույցները կարող են տեսագրվել համաձայն ներպետական իրավունքով սահմանված կանոնների, որպես ապացույց քրեական վարությամբ կամ բժշկական ու բուժական ծառայությունների օգտագործման համար: Երեխաներին պաշտպանելու և խոսել քաջալերելու նպատակով դատավորը կարող է պատվիրել, որպեսզի լսումները տեղի ունենան դռնփակ, և թույլ տալ երեխային խոսել առանց ենթադրյալ հանցագործի հետ անմիջական շփման (տեսակոնֆերանս):

Բացի Կոնվենցիայի դրույթներից, անհրաժեշտ է նշել, որ Եվրոպայի խորհրդի միջկառավարական աշխատանքի համատեքստում 2010 թվականի նոյեմբերի 17-ին Նախարարների կոմիտեի կողմից Երեխայահաճ արդարադատության ուղենիշներ են ընդունվել, որոնց նպատակն է բարելավել երեխաների համար դատական

համակարգի մատչելիությունն ու դատական համակարգի վերաբերմունքը նրանց նկատմամբ:

Մեռական բնույթի հանցագործությունների համար դատապարտված անձանց վերաբերյալ ազգային տվյալների գրանցումը և պահումը

Երեխաների սեռական շահագործումն ու սեռական չարաշահումը կանխարգելելու և քրեորեն հետապնդելու նպատակով Կոնվենցիան նախատեսում է, որպեսզի դատապարտված անձանց ինքնությանը և գենետիկական դիմագծին վերաբերող տվյալները հնարավոր լինի ձայնագրել, պահել և անհրաժեշտության դեպքում ուղարկել մեկ այլ պետության համապատասխան մարմիններին՝ անձնական տվյալների պաշտպանության համապատասխան դրույթների¹² և յուրաքանչյուր պետության ներպետական իրավունքի համաձայն: Պետությունները զգալի ճկունություն ունեն որոշելու, թե ինչպես կատարել այդ պարտականությունը: Այս թեմայով ազգային խորհրդարանների համար օգտակար հղում կարող է լինել Խորհրդարանական վեհաժողովի թիվ 1733 (2010) բանաձևը՝ սեռական հանցագործների նկատմամբ միջոցների կիրառման վերաբերյալ:

12. Համաձայն Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին կոնվենցիայի 5-րդ հոդվածի (ETS թիվ 108) «Ավտոմատ մշակման ենթարկվող անձնական տվյալները պետք է. ա) ձեռք բերվեն և մշակվեն արդար ու օրինական ճանապարհով, բ) պահպանվեն հատուկ և օրինական նպատակների համար ու չօգտագործվեն այլ նպատակներով, գ) լինեն համարժեք, համապատասխան և չգերազանցեն դրանց պահպանման նպատակների սահմանները, դ) լինեն ճշգրիտ և անհրաժեշտության դեպքում պահվեն թարմացված վիճակում, ե) պահպանվեն այնպիսի եղանակով, որը թույլ է տալիս նույնականացնել տվյալների սուբյեկտներին՝ ոչ ավելին, քան անհրաժեշտ է այդ տվյալների պահպանման նպատակներով»: Ուստիս պետք է լինեն հատուկ անվտանգության այլ միջոցներ յուրաքանչյուր ֆայլի համար՝ հաշվի առնելով դրա խոցելիության աստիճանը, կազմակերպության ներսում նշված տեղեկատվության մատչելիության սահմանափակման կարիքը և երկարաժամկետ պահպանմանն առնչվող պահանջները:

Միջազգային համագործակցությունը

Կոնվենցիան ստորագրած կողմերին առաջարկում է համագործակցել քրեական հարցերով և երեխաների սեռական շահագործման ու սեռական չարաշահման կանխարգելման և տուժողների պաշտպանության ու նրանց աջակցության ցուցաբերման ոլորտներում:

Եվրոպայի խորհուրդն արդեն ունի մի շարք ստանդարտներ՝ կապված քրեական գործերում դատական համագործակցության հետ: Օրինակ՝ Հանձնման մասին եվրոպական կոնվենցիան (ETS թիվ 24), Քրեական գործերով փոխադարձ օգնության եվրոպական կոնվենցիան (ETS թիվ 30) ու դրա լրացուցիչ արձանագրությունները (ETS թիվ 86, 98, 99, 182) և Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, հետախուզման, առգրավման և բռնագրավման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին կոնվենցիան (ETS թիվ 141) հանդիսանում են փոխհատվող փաստաթղթեր, որոնք կարող են կիրառվել բազմաթիվ տարբեր հանցագործությունների նկատմամբ:

Կոնվենցիան ինքնին սահմանում է մի շարք ընդհանուր սկզբունքներ, որոնցով պետք է ղեկավարվի միջազգային համագործակցությունը՝

- ▶ հնարավորության սահմաններում կողմերը պետք է վերացնեն տեղեկատվության և ապացույցների արագ շրջանառման խոչընդոտները և համագործակցեն երեխաների սեռական շահագործման և սեռական չարաշահման դեմ պայքարելու և կանխարգելելու, տուժողներին պաշտպանելու և օգնություն ցուցաբերելու և այդ հանցագործություններին առնչվող վարույթներ իրականացնելու նպատակով,
- ▶ կողմերը պետք է տուժողներին հնարավորություն ընձեռեն բողոք ներկայացնել իրենց բնակության վայրի պետության համապատասխան մարմիններ այն դեպքերում, երբ հանցագործությունը կատարվել է մեկ այլ կողմի տարածքում,
- ▶ իրենց դատական համագործակցության նպատակներից ելնելով կողմերը կարող են հենվել Լանցարոտեի կոնվենցիային, որը բավարար իրավաբանական հիմք է հանդիսանում,

- ▶ կողմերը պետք է ջանան երրորդ պետություններին ուղղված աջակցության ծրագրերում ներառել երեխաների սեռական շահագործման և սեռական չարաշահման կանխարգելումը և դրա դեմ պայքարը: Եվրոպայի խորհրդի շատ անդամ պետություններ ունեն այդպիսի ծրագրեր, որոնք ընդգրկում են այնպիսի բազմազան ոլորտներ, ինչպիսիք են իրավունքի գերակայության վերականգնումն ու ամրապնդումը, դատական հաստատությունների ստեղծումը, պայքարը հանցագործությունների դեմ և տեխնիկական աջակցությունը միջազգային կոնվենցիաների իրականացման ոլորտում:

Պիտանցման մեխանիզմ՝ Կողմերի կոմիտեն

Կազմը

Կոնվենցիան նախատեսում է դիտանցման մեխանիզմ՝ երաշխավորելու իր արդյունավետ կիրառումը կողմերի կողմից: Մեխանիզմը հիմնված է մի մարմնի՝ Կողմերի կոմիտեի վրա, որը բաղկացած է Կոնվենցիայի կողմ հանդիսացող պետությունների ներկայացուցիչներից: Հետևաբար, սկզբում այն կլինի բավականին ընդհանուր դիտանցման մեխանիզմ և անպայմանորեն չի ներառի երեխաների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու հատուկ պետական մարմիններին: Կոմիտեն առաջին անգամ կգումարվի Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարի կողմից՝ Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում՝ 10-րդ ստորագրողի կողմից վավերացվելուց հետո (2010 թվականի դեկտեմբերին արդեն 10 վավերացում կար): Այս պայմանը նախատեսվել է, որպեսզի կոմիտեն կարողանա ներառել պետությունների բավարար թվով ներկայացուցիչներ՝ արդյունավետ և արժանահավատ գործելու համար: Դրա հաջորդ նիստերը գումարվում են Կողմերի առնվազն մեկ երրորդի կամ Գլխավոր քարտուղարի պահանջով:

Եվրոպայի խորհրդի այլ մարմիններ կարող են մասնակցել դիտանցման մեխանիզմում, մասնավորապես Խորհրդարանական վեհաժողովը, Մարդու իրավունքների հանձնակատարը,

Հանցավորության հիմնախնդիրների հարցերով եվրոպական կոմիտեն (ՀՀԵԿ/CDPC) և մի շարք այլ կոմիտեներ, որոնք ելնելով իրենց պարտականություններից՝ հստակ օգտակար ներդրում կունենան դիտանցման աշխատանքներում մասնակցություն ունենալու դեպքում:¹³ Քաղաքացիական կազմակերպությունները, որոնք աշխատում են երեխաների սեռական շահագործման և սեռական չարաշահման կանխարգելման ոլորտում, նույնպես կհրավիրվեն օգնելու կոմիտեի աշխատանքներին:

Գործառույթները

Կողմերի կոմիտեն ունի երեք հիմնական գործառույթ, որոնք են՝

- ▶ նպաստել Կոնվենցիայի արդյունավետ օգտագործմանն ու կիրառմանը,
- ▶ կարծիք հայտնել Կոնվենցիայի կիրառմանն առնչվող ցանկացած հարցի կապակցությամբ,
- ▶ գործել որպես տեղեկատվության, փորձի և լավագույն գործելակերպի հավաքագրման, վերլուծության և պետությունների միջև դրանց փոխանակման հաշվարկային պալատ՝ երեխաների սեռական շահագործման և սեռական չարաշահման կանխարգելման և դրանց դեմ պայքարի ոլորտում՝ վերջինների քաղաքականության բարելավման նպատակով:

Այլ միջազգային փաստաթղթերին առնչությունը

- ▶ Առնչությունը Երեխայի իրավունքների մասին Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիային և Մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության և մանկական պոռնկագրության մասին դրա կամընտիր

13. Այդ կոմիտեներն են՝ Իրավական համագործակցության եվրոպական կոմիտեն (ԻՀԵԿ/CDCJ), Սոցիալական իրավունքների եվրոպական կոմիտեն (ՄԻԵԿ/EC SR), Եվրոպայի դատավորների խորհրդակցական խորհուրդը Youth (ԵԴԽԽ/CCJ), Սոցիալական համախմբվածության եվրոպական կոմիտեն (ՍՀԵԿ/CD CS) և, մասնավորապես, Մարդու իրավունքների հարցերով ղեկավար կոմիտեն (ՄԻՂԿ/CDDH):

արձանագրությանը: Սույն Կոնվենցիան չի ազդում Երեխայի իրավունքների մասին Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիայի և դրա կամընտիր արձանագրության դրույթներից բխող իրավունքների և պարտավորությունների վրա: Դրանով նախատեսվում է ամրապնդել դրանց պաշտպան թյ նը և մշակել ու լրացնել դրանցում սահմանված չափանիշները:

- ▶ Այլ միջազգային փաստաթղթերին առնչությամբ: Սույն Կոնվենցիան չի ազդում այլ միջազգային փաստաթղթերի դրույթներից բխող իրավունքների և պարտավորությունների վրա, կամ փաստաթղթերի վրա, որոնք ուղղված են սույն Կոնվենցիայով ղեկավարվող խնդիրներին: Կողմերը կարող են կնքել երկկողմանի կամ բազմակողմանի համաձայնություններ և ցանկացած այլ փաստաթուղթ, որոնց անդրադառնում է Կոնվենցիան, եթե դրանք չեն շեղվում Կոնվենցիայից:
- ▶ Ինչ վերաբերում է Եվրոպական Միությանը, ապա այն կառաջնորդվի «տարանջատման հոդվածով», այլ կերպ ասած՝ Եվրոպական Միության անդամ պետություններն իրենց փոխհարաբերություններում կիրառում են Համայնքի և Եվրոպական Միության կանոններն այնքանով, որքանով Համայնքի և Եվրոպական Միության կանոնները կարգավորում են երեխաների սեռական շահագործմանն ու սեռական չարաշահմանն առնչվող խնդիրները՝ չհակասելով Եվրոպայի խորհրդի կոնվենցիայի առարկային և նպատակին:

Փոփոխություններ Կոնվենցիայում

Կողմերը կարող են առաջարկել փոփոխություններ կատարել Կոնվենցիայի դրույթներում: Առաջարկված փոփոխությունների վերաբերյալ պետք է տեղեկացվեն Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ պետությունները, բոլոր ստորագրողները, բոլոր կողմերը, Եվրոպական համայնքը և ցանկացած այլ պետություն, որը հրավիրվել է ստորագրելու Կոնվենցիան կամ միանալու դրան: Հանցավորության հիմնախնդիրների հարցերով Եվրոպական կոմիտեն (ՀՀԵԿ/CDPC) առաջարկված փոփոխության վերաբերյալ մշակում է եզրակացություն, որն այնուհետև ներկայացնում է Նախարարների

կոմիտե: Առաջարկն ու եզրակացությունն ուսումնասիրելուց հետո Նախարարների կոմիտեն պետք է խորհրդակցի բոլոր կողմերի հետ և ձեռք բերի միաձայն ընդունում՝ նախքան փոփոխությունն ընդունելու վերաբերյալ որոշում կայացնելը:

Եզրափակիչ դրույթներ

Սույն Կոնվենցիան բաց է ստորագրման համար Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների, անդամ չհանդիսացող պետությունների (Վատիկան, Ճապոնիա, Մեքսիկա, Ամերիկայի Միացյալ Նահանգներ և Կանադա) համար, որոնք մասնակցել են դրա մշակման աշխատանքներին, ինչպես նաև Եվրոպական համայնքի համար:

Նախարարների կոմիտեն կողմերի հետ խորհրդակցելուց հետո կարող է հրավիրել Եվրոպայի խորհրդի անդամ չհանդիսացող ցանկացած պետության միանալ Կոնվենցիային: Որոշումը պետք է կայացվի անդամների երկու երրորդ մեծամասնությամբ և Նախարարների կոմիտեի նիստերին մասնակցելու իրավունք ունեցող Պայմանավորվող պետությունների ներկայացուցիչների կողմից միաձայն ընդունմամբ: Միացումը հնարավոր է դարձել 2010 թվականի հուլիսի 1-ին՝ Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց հետո հինգերորդ վավերացումից ի վեր:

Անհրաժեշտության դեպքում Կոնվենցիայի կողմերը կարող են նշել այն տարածքը կամ տարածքները, որտեղ այն կիրառվելու է: Սակայն Կոնվենցիայի նպատակներին կհակասի, եթե պետություններն առանց հիմնավոր պատճառի իրենց տարածքի որոշ հատվածներում բացառեն Կոնվենցիայի դրույթների կիրառումը:

Կողմերը կարող են վերապահումներ կատարել Կոնվենցիայի որոշակի դրույթների կիրառման հետ կապված միայն այն դեպքում, երբ այդ վերապահումներն ուղղակիորեն թույլատրված են: Վերապահումների նպատակն է հնարավորինս շատ պետությունների հնարավորություն տալ վավերացնել Կոնվենցիան և այդպիսով պաշտպանել իրենց հիմնարար իրավական որոշ սկզբունքները:

5. Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարի տեղակալի վերջաբանը

Սեռական բռնությունը բարդ, նրբախնդիր և տագնապալի տարածում ունեցող երևույթ է: Հաշվարկված է, որ հինգ երեխայից զրեթե մեկը դառնում է սեռական բռնության զոհ: Այս ձեռնարկում մանրամասն նկարագրվում են այն միջոցները, որոնք պետք է ձեռնարկել սեռական բռնությունը կանխարգելելու, երեխաներին պաշտպանելու և անպատժելիությանը վերջ դնելու նպատակով:

Երեխաների նկատմամբ սեռական բռնության վերացմանը նվիրված Եվրոպայի խորհրդի ՀԻՆԳԻՑ ՄԵԿԸ քարոզարշավը Հռոմում մեկնարկելուց հետո երկու տարի անց կայուն աճել է այն երկրների թիվը, որոնք վավերացրել են Լանցարտտեի կոնվենցիան: Կոնվենցիայի արդյունավետ կիրառման դիտանցումն այժմ Լանցարտտեի կոմիտեի իրավասության ներքո է, որը շուտով կսկսի տեղեկություններ հավաքել կողմ պետություններում առկա իրավիճակի մասին և գնահատել, թե արդյոք գործող օրենսդրությունը և մշակված քաղաքականությունը համապատասխանում են Կոնվենցիայով նախատեսված չափանիշներին: Կոմիտեն նաև գործում է որպես լավագույն գործելակերպի և քննարկումների փոխանակման արժեքավոր հարթակ՝ քննարկելու, թե ինչպես լավագույնս հաղթահարել այն խոչընդոտները, որոնց հանդիպում են պետությունները սեռական բռնությունը կանխարգելելու և դրա դեմ պայքարելու ու տուժողներին աջակցելու իրենց ջանքերը գործադրելիս:

ՀԻՆԳԻՑ ՄԵԿԸ քարոզարշավը նույնպես ապացուցել է իր հզոր ներուժը: Առանձին շահառուների համար նախատեսված գործիքների մշակման միջոցով քարոզարշավն օգնում է

խորհրդարանականներին, պետական պաշտոնյաներին, տեղական իշխանություններին, ՈԿԿ-ներին, մարդու իրավունքների պաշտպաններին, լրատվամիջոցներին, երեխաների հետ աշխատող մասնագետներին, ծնողներին և երեխաներին ձեռնարկել որոշակի գործողություններ սեռական բռնությունը կանխարգելելու և դրա մասին հաղորդելու ուղղությամբ: Քարոզարշավը նույնիսկ տարածվել է Եվրոպայի սահմաններից դուրս:

Խորհրդարանական վեհաժողովը շարունակում է կարևոր դեր խաղալ սեռական բռնության դեմ պայքարում: ՀԻՆԳԻՑ ՄԵԿԸ քարոզարշավին աջակցելու նրա որոշմանն անմիջապես հետևեցին շատ կոնկրետ և խիստ արդյունավետ միջոցներ:

Կոչ եմ անում Եվրոպայի բոլոր խորհրդարաններին և խորհրդարանականներին միանալ այդ կարևոր քարոզարշավին: Սա մի գործ է, որն արժանի է ձեր հրատապ ուշադրությանը և պահանջում է անկեղծ նվիրում:

Ես ապավինում եմ ձեր աջակցությանը:

Գաբրիելա Բատաինի-Դրագոնի
Եվրոպայի խորհրդի Գլխավոր քարտուղարի տեղակալ

Հավելված II

Ստորագրված և վավերացված փաստաթղթերի ցանկ

Թարմացված տեղեկատվության համար այցելել Եվրոպայի
խորհրդի կայքէջի «Եվրոպայի խորհրդի պայմանագրերի շարք»
բաժինը: www.conventions.coe.int

Մեռական շահագործումից և սեռական չարաշահումից երեխաներին պաշտպանելու մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիա CETS No. 201

Պայմանագիրը բաց է անդամ պետությունների, դրա մշակմանը մասնակցած ոչ անդամ պետությունների և Եվրոպական թյան ստորագրման համար, ինչպես նաև ոչ անդամ այլ պետությունների կողմից դրան միանալու համար

Բացվել է ստորագրման համար Ուժի մեջ է մտել

Վայրը՝ Լանցարտոն
Ամսաթիվը՝ 25/10/2007

Պայմանները. 5 վավերացում,
որոնցից առնվազն երեքը պետք
է լինեն Եվրոպայի խորհրդի
անդամ պետությունների կողմից
Ամսաթիվը՝ 01/07/2010

Կարգավիճակը 04/12/2015 դրությամբ

Եվրոպայի խորհրդի անդամ պետություններ

	Ստորագրում	Վավերացում	Ուժի մեջ է մտել	Նշաններ	Վ.	Հ.	Ի.	Տ.	Հ.	Ա.
Ադրբեջան	17/11/2008									
Ալբանիա	17/12/2008	14/04/2009	01/07/2010				X			
Անդորրա	29/06/2012	30/04/2014	01/08/2014		X		X			
Ավստրիա	25/10/2007	25/02/2011	01/06/2011				X			
Բելգիա	25/10/2007	8/03/2013	01/07/2013		X		X			
Բոսնիա և Հերցեգովինա	12/10/2011	14/11/2012	01/03/2013				X			
Բուլղարիա	25/10/2007	15/12/2011	01/04/2012		X		X			
Գերմանիա	25/10/2007	18/11/2015			X	X	X			
Դանիա	20/12/2007	18/11/2009	01/07/2010		X		X	X		
Էստոնիա	17/09/2008									
Թուրքիա	25/10/2007	07/12/2011	01/04/2012				X			

	Ստորագրում	Վավերացում	Ուժի մեջ է մտնել	Նշումներ	Վ.	Հ.	Ի.	Տ.	Հ.	Ա.
Իդլանդիա	25/10/2007									
Իսլանդիա	04/02/2008	20/09/2012	01/01/2013				X			
Իսպանիա	12/03/2009	05/08/2010	01/12/2010			X	X			
Իտալիա	07/11/2007	03/01/2013	01/05/2013				X			
Լատվիա	07/03/2013	18/08/2014	01/12/2014		X		X			
Լեհաստան	25/10/2007	20/02/2015				X	X			
Լիխտենշտեյն	17/11/2008	11/09/2015			X		X			
Լիտվա	25/10/2007	09/04/2013	01/08/2013				X			
Լյուքսեմբուրգ	07/07/2009	09/09/2011	01/01/2012				X			
Խորվաթիա	25/10/2007	21/09/2011	01/01/2012				X			
Կիպրոս	25/10/2007	12/02/2015					X			
Հայաստան	29/09/2010									
Հունաստան	25/10/2007	10/03/2009	01/07/2010				X			
Հունգարիա	29/11/2010	03/08/2015			X		X			
Մալթա	06/09/2010	06/09/2010	01/01/2011				X			
Միացյալ Թագավորություն	05/05/2008									
Մոլդովա	25/10/2007	12/03/2012	01/07/2012			X	X			
Մոնակո	22/10/2008	07/10/2014			X	X				
Մոնտենեգրո	18/06/2009	25/11/2010	01/03/2011			X	X			
Նախկին Հարավսլավիայի և Մակեդոնիայի Հանրապե- տություն	25/10/2007	11/06/2012	01/10/2012				X			
Նիդերլանդներ	25/10/2007	01/03/2010	01/07/2010				X	X		
Նորվեգիա	25/10/2007									
Շվեդիա	25/10/2007	28/06/2013	01/10/2013		X		X			
Շվեյցարիա	16/06/2010	18/03/2014	01/07/2014		X		X			
Չեխիայի Հանրապետ- ություն	07/07/2014									
Պորտուգալիա	25/10/2007	23/08/2012	01/12/2012				X			
Ռումինիա	25/10/2007	17/05/2011	01/09/2011				X			
Ռուսաստան	01/10/2012	09/08/2013	01/12/2013		X		X			

	Ստորագրում	Վավերացում	Ուժի մեջ է մտել	Նշումներ	Վ.	Հ.	Ի.	Տ.	Հ.	Ա.
Սան Մարինո	25/10/2007	22/03/2010	01/07/2010				X			
Սերբիա	25/10/2007	29/07/2010	01/11/2010				X			
Սլովակիա	09/09/2009									
Սլովենիա	25/10/2007	26/09/2013	01/01/2014		X	X	X			
Վրաստան	12/03/2009	23/09/2014				X				
Ուկրաինա	14/11/2007	27/08/2012	01/12/2012			X	X			
Ֆինլանդիա	25/10/2007	09/06/2011	01/10/2011				X			
Ֆրանսիա	25/10/2007	27/09/2010	01/01/2011		X	X	X			

Եվրոպայի խորհրդի ոչ անդամ պետություններ

	Ստորագրում	Վավերացում	Ուժի մեջ է մտել	Նշումներ	Վ.	Հ.	Ի.	Տ.	Հ.	Ա.
Ամերիկայի Միացյալ Նահանգներ										
Կանադա										
Հաայոնիա										
Մարոկկո										
Մեքսիկա										
Սուրբ Աթոռ/Վատիկան										

Միջազգային կազմակերպություններ

	Ստորագրում	Վավերացում	Ուժի մեջ է մտել	Նշումներ	Վ.	Հ.	Ի.	Տ.	Հ.	Ա.
Եվրոպական միություն										

Ստորագրած բայց վավերացում չկատարած պետությունների ընդհանուր թվաքանակը	8
Վավերացում կատարած/Կոնվենցիային միացած պետությունների ընդհանուր թվաքանակը	39

Նշումներ.

մ-Միացում. ս-Ստորագրում առանց վավերացմանը վերաբերող վերապահումների.

իր-Իրավահաջորդություն. ո-Ստորագրում "ad referendum"

Վ.-Վերապահումներ. Հ.-Հայտարարություններ. Ի.-Իշխանություններ. S.-Տարածքային կիրառում. Հ.-Հաղորդակցություն. Ա.-Առարկություն.

Աղբյուրը՝ Պայմանագրերի գրասենյակի կայքէջը՝
<http://conventions.coe.int> – *Հրաժարագիր

Երեխաներին և սեռական չարաշահումից նրանց պաշտպանելու գործը վայելում է խորհրդարանականների լիասիրտ և հզոր աջակցությունը:

Միավորված ազգերի կազմակերպությունը և Եվրոպայի խորհուրդը համատեղ աշխատում են երեխաների իրավունքներն ու արժանապատվությունը պաշտպանելու ուղղությամբ: Նրանց առանցքային փաստաթղթերը՝ Երեխայի իրավունքների մասին Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիան ու Սեռական շահագործումից և սեռական չարաշահումից երեխաներին պաշտպանելու մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիան (Լանցարոտեի կոնվենցիան՝ CETS թիվ 201), ձգտում են վերացնել բռնությունը երեխաների հանդեպ:

Ուստի ձեր առջև գտնվող ձեռնարկը մշակված է որպես գործնական միջոց, որը պատկերացում է տալիս, թե ինչպես կարելի է առավել լավ ըմբռնել Կոնվենցիայի հավելյալ արժեքը: Այն ընդգծում է նրբանկատ խնդիրներ, որոնք պետք է հաղթահարել ազգային օրենսդրությամբ, և տրամադրում է լավագայուն գործելակերպի օրինակներ: Ես վստահ եմ, որ այս ձեռնարկը ձեզ համար կդառնա աղբյուր, որին կարելի է հղում կատարել բոլոր երեխաների գործով արդյունավետորեն զբաղվելու համար:

Որպես Խորհրդարանական վեհաժողովի նախագահ՝ ես կոչ եմ անում բոլոր խորհրդարանականներին ջանք չխնայել Լանցարոտեի

կոնվենցիան սատարելու համար և տեղեկատվ թյ ն տարածել մեր ՀԻՆԳԻՑ ՄԵԿԸ քարոզարշավի մասին՝ երեխաների հանդեպ սեռական բռնությանը վերջ տալու նպատակով: Մեր ջանքերը կօգնեն համախմբել լայն հասարակությանը, որպեսզի մեր երեխաները կարողանան երջանիկ ու ապահով մեծանալ:

Անն Բրասյոր
Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական
վեհաժողովի նախագահ

<http://assembly.coe.int/oneinfive>

Երեխաների և սեռական բռնությունից նրանց պաշտպանելու գործը վայելում է խորհրդարանականների լիասիրտ և գորեղ աջակցությունը:

Միավորված ազգերի կազմակերպությունը և Եվրոպայի խորհուրդը միասին աշխատում են պաշտպանել երեխաների իրավունքներն ու արժանապատվությունը: Նրանց գլխավոր փաստաթղթերը՝ Երեխայի իրավունքների մասին Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիան և Սեռական շահագործումից և սեռական բնույթի բռնություններից երեխաներին պաշտպանելու մասին Եվրոպայի խորհրդի կոնվենցիան (Լանզարոտի կոնվենցիան՝ CETS № 201), ձգտում են վերացնել բռնությունը երեխաների հանդեպ:

Ուստի ձեր առջև դրված ձեռնարկը կազմված է որպես գործնական միջոց, որը ըմբռնում է տալիս, թե ինչպես կարելի է ավելի լավ հասկանալ կոնվենցիայի հավելյալ արժանիքը: Այն ընդգծում է նրբանկատ խնդիրներ, որոնք պետք է լուծել ազգային օրենսդրությամբ, և տալիս է լավ փորձառության օրինակներ: Ես վստահ եմ, որ այս ձեռնարկը ձեզ համար կդառնա աղբյուր, որին կարելի է դիմել արդյունավետ կերպով զբաղվելու բոլոր երեխաների գործով:

Որպես Խորհրդարանական վեհաժողովի նախագահ՝ ես կոչ եմ անում խորհրդարանականներին՝ ջանք չխնայել սատարելու համար Լանզարոտի կոնվենցիան և տարածել լուրը մեր Հինգից մեկը՝ քարոզարշավի մասին՝ վերջ տալու համար սեռական բռնությանը երեխաների հանդեպ: Մեր ջանքերը կօգնեն համախմբել լայն հասարակությանը, այնպես, որ մեր երեխաները կարողանան երջանիկ ու ապահով մեծանալ:

Անն Բրապոր

Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի նախագահ

<http://assembly.coe.int/oneinfive>